2013, ՍԵՊՏԵՄԲԵՐ Ա, ԹԻՎ 17 (397)

Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԹԵՐԹ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԳԻՏԵԼԻՔԻ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հղում ենք հայրապետական Մեր օրհնությունը՝ Գիտելիքի, գրի եւ դպրության օրվա առիթով, շնորհավորում կրթական հաստատությունների բոլոր մանկավարժներին, ուսանողներին եւ աշակերտներին:

Սիրելինե՛ր, տոնական այս օրը դիմավորում ենք ուրախ սրտով ու բարի ցանկություններով: Վստահ ենք, որ մեր նվիրյալ ուսուցիչների եւ կրթության բարի մշակների ջանքերով մեր զավակների համար ուսումը, գիրքն ու ընթերցումը դառնում են կյանքի լուսատու կանթեղները: Ուսանեք սիրո՛վ, քանի որ սուրբգրային խոսքով՝ խելացի սիրտը ձեռք է բերում իմացություն, եւ իմաստունների ականջները փնտրում են ուսանելի խորհուրդներ (Առ. ԺԸ 15):

Մեր հայցն ու աղոթքն է առ Բարձրյալ Տերը, որ աստվածային երկնառաք Իր օրհնությամբ արգասավորվի նոր ուսումնական տարին, եւ մեր զավակները ջանադրությամբ ամեն ժամ բազմապատկեն իրենց գիտելիքները, որպեսզի իմացությամբ զորացած կարողանան լավագույնս ծառայել մեր Հայրենիքին եւ Սուրբ Եկեղեցուն:

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհը, սերը եւ ողորմությունը թող լինեն ձեզ բոլորիդ հետ: Ամեն:

Կրթության մշակների օրհնություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնում

Օգոստոսի 31-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց կրթության մշակների օրհնության մասնավոր կարգ: Գիտելիքի եւ դպրության օրվա առիթով Մայր Աթոռում արդեն ավանդաբար կազմակերպվող այս արարողությանը ներկա էին ՀՀ կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը, ԿԳՆ աշխատակիցներ, ՀՀ մարզպետարանների կրթության վարչության պետեր, ՀՀ պետական բուհերի ռեկտորներ, ՀՀ քոլեջների եւ ուսումնարանների տնօրեններ, ՀՀ մարզերի եւ Երեւանի դպրոցների տնօրեններ, ինչպես նաեւ՝ Մայր Աթոռի հոգեւոր-կրթական հաստատությունների պատասխանատուներ:

Մայր Աթոռի միաբան Մուշեղ եպս Բաբայանի նախագահությամբ կատարված արարողության սկզբում ներկաներին ողջունեց Մայր Աթոռի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Վարդան վրդ. Նավասարդյանը՝ անդրադառնալով ուսուցչի վեհ կոչմանն ու առաքելությանը:

Օրհնության կարգն ավարտվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի Պահպանիչ աղոթքով եւ օրհնության խոսքով: Նորին Սրբությունը, շնորհավորելով ամենքին նոր ուսումնական տարվա առիթով, վստահություն հայտնեց, որ այցը Մայր Աթոռ Ս. Էջմիածին կրթության եւ գիտության գործիչներին առավել կխանդավառի ու կզորացնի ազգանվեր ծառայության մեջ: *«Ձեր առաքելությունն արարչագործության պսակը հանդիսացող մարդու կրթությունն ու դաստիարակությունն է: Եվ մենք մեծապես կարեւորում ենք կրթության մշակների օրհնության այս արարողությունը, որպեսզի գաք Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Իշման ս. Սեղանի առջեւ ձեր աղոթքը կատարեք, ձեր ուխտը վերանորոգեք՝ անդրադարձումով, որ պիտի կրթեք, դաստիարակեք մեր զավակներին Քրիստոսի Ավետարանի լույս պատվիրաններով ու պատգամներով, մեր հայրերի կերտած սրբազան ժառանգությամբ եւ ավանդով, որպեսզի մեր զավակները ձեր ձեռքերի մեջ հասունանան, նկարագիր ձեռք բերեն՝ լինելու արժանավոր զավակը մեր Հայրենիքի եւ մեր ժողովրդի»*,- նշեց Հայոց Հայրապետը: Վեհափառն ընդգծեց, որ հայրենիքի բարօր կյանքի երաշխիքը լուսավորված, կրթված, Քրիստոսի սիրով, Ավետարանի նվիրական պատվիրաններով հասակ առած եւ հոգի ու գիտակցություն կերտած զավակներն են: Նորին Սրբությունը մաղթեց, որ հայոց կյանքն անշեղորեն առաջնորդվի այն ճանապարհով, որով դարեր շարունակ քաջ ու խիզախ անցել են մեր հայրերը՝ հաղթահարելով ամեն փորձություն ու կյանքի դառնություն, եւ կերտել լուսավոր օրը մեր ժողովրդի:



Այնուհետեւ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ ընդունելություն, որի ընթացքում Նորին Սրբությունը վերստին իր օրհնությունն ու բարեմաղթանքները բերեց ներկաներին:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը

«Կրոնի ազատությունը արդի աշխարհում. մարտահրավերներ ու երաշխիքներ» խորագրով համաժողովի մասնակիցներին

Գոհունակությամբ ողջունում եւ ձեզ ենք հղում հայրապետական Մեր օրհնությունը Հայաստանի Հանրապետության քաղաքամայր Երեւանում: Մեծապես գնահատելի է Մեզ համար կրոնական ազատությանն ու դրա մարտահրավերներին նվիրված այս համաժողովի անցկացումը քրիստոնեական հինավուրց մի երկրում, որի ամեն անկյուն ու քար պատված են մարդկային արժեքների եւ ազատության համար մղված պայքարի վկայությամբ:

Այսօր այստեղ հավաքված հոգեւոր այրերի, քաղաքագետների, դիվանագետների եւ լրագրողների պատկառելի ներկայությունը խոսում է արծարծվող թեմայի կարեւորության ու արդիականության մասին: Մեզ համար ողջունելի է նաեւ Եվրոպայի խորհրդի նախարարների խորհրդի կոմիտեում Հայաստանի նախագահության շրջանակներում համաժողովի՝ Հայաստանում անցկացման նախաձեռնությունը: Այն մեծապես պիտի նպաստի Հայաստանի եւ հայ մշակութային ինքնության ներգրավվածությանը՝ Եվրախորհրդի կողմից 2008 թվականին ընդունված «Միջմշակութային երկխոսության Սպիտակ գրքի» մշակմանն ու զարգացմանը, որի արդիականությունն այսօր էլ զգալի է աշխարհում:

«Ապրել միասին, արժանապատվորեն՝ իբրեւ հավասար մարդիկ». այսպես է բացվում Եվրախորհրդի կողմից մշակված ու ներկայացված «Սպիտակ գիրքը», որը նոր հորիզոններ է բացում միջմշակութային եւ միջկրոնական երկխոսության ասպարեզում: Ժամանակակից աշխարհում հաճախ են աղավաղվում հավասարության ու ազատության չափանիշները՝ դրանով իսկ վտանգելով միջմշակութային երկխոսության իրական արժեքն ու կրոնական ազատության ճիշտ ընկալումը, որի հիմնական նպատակն է նպաստել հանդուրժողականությանը, աշխարհում խաղաղությանը, կայունությանն ու բարօրությանը: Անկեղծ հոգով ու մոտեցումով ծնվող երկխոսության մեջ է, որ մշակութային եւ կրոնական ինքնության հավասար դրսեւորումն ուղիղ համեմատական է մերձավորին սիրո ու հանդուրժողականության մեջ տեսնելու ցանկությանը. «Եղբարք, միայն զի ազատութիւնն ձեր ոչ լինիցի ի պատճառս մարմնոյ, այլ սիրով ծառայեցէք միմեանց»,- բացատրում է սբ Պողոս առաքյալը (Գաղ. Ե 13):

Զարգացման նոր փուլ թեւակոխած Եվրոպական քաղաքակրթությունը պետք է շարունակի հարգել հնագույն քրիստոնեական արմատներ ունեցող ժողովուրդների մշակութային յուրահատկությունները՝ բազմազանությունը դիտելով որպես համաեվրոպական հարստություն:

Հայ ժողովուրդն ու Հայաստանյայց Եկեղեցին դարեր շարունակ մաքառել են՝ պահպանելու իրենց ուրույն հոգեւոր-մշակութային ժառանգությունը, ունեն կրոնական բազմազանությունն ու հանդուրժողականությունը հարգելու հարուստ եւ պատմական փորձառություն: Ցեղասպանություն վերապրած հայ ժողովուրդն իր բազմադարյա պատմության ընթացքում միշտ առաջնորդվել է քրիստոնեական մատենագրության մեջ հրաշալիորեն ձեւակերպված «մինթիւն ի կարեւորս, ազատութիւն յերկրայականս» բանաձեւով:

Շարունակությունը՝ էջ 2

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀԲԸՄ նախագահին

4 սեպտեմբերի

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահ Պերճ Սեդրակյանին: Հանդիպմանն անդրադարձ կատարվեց ազգային-եկեղեցական զանազան հարցերի:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ ՀԲԸՄ նախագահը կարեւորեցին աշխարհասփյուռ հայության եւ ազգային կառույցների ու հաստատությունների շարունակական աջակցությունը սիրիահայությանը՝ Սիրիայում տիրող դժվարին այս շրջանում:

Ուրախությամբ ընդունելով առաջիկա սեպտեմբերի 24-27-ը Մայր Աթոռում գումարվելիք Հայ Եկեղեցու եպիսկոպոսաց ժողովի մասին տեղեկությունը՝ ՀԲԸՄ նախագահն իր մաղթանքները բերեց ժողովի աշխատանքներին՝ ընդգծելով եպիսկոպոսաց ժողովի կարեւոր առաքելությունը համայն հայության կյանքում:

Մասնավոր անդրադարձ կատարվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գործունեությանը, կրթական, սոցիալական եւ եկեղեցաշինական ծրագրերին: Այս առիթով Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը հայտնեց ինչպես անձնապես տիար Պերճ Սեդրակյանին՝ որպես Մայր Աթոռի բարերարի, այնպես եւ ՀԲԸՄ բոլոր անդամներին՝ Ս. Էջմիածնի հանդեպ իրենց ուշադրության եւ նվիրումի համար:

Իսկ Պերճ Սեդրակյանը, իր հավատարմությունը հայտնելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, վստահեցրեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որ Հայկական բարեգործական ընդհանուր միությունը շարունակելու է ըստ ամենայնի զորակցել Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցու գործունեությանը եւ Մայր Աթոռի ազգանպաստ ծրագրերին:

ՀՀ-ում Լիբանանի դեսպանին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Լիբանանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Ժան Մաքարոնին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունն ու բարեմաղթանքները բերեց դեսպանին՝ վստահություն հայտնելով, որ վերջինս իր առաքելության ընթացքում կնպաստի երկու բարեկամ երկրների հարաբերությունների առավել ամրապնդմանը: Ապա անդրադառնալով երկու երկրների գործակցությանը՝ Վեհափառ Հայրապետը հույս հայտնեց, որ ջերմ եւ սերտ փոխհարաբերությունները կշարունակեն բարի արդյունքեր բերել երկու ժողովուրդներին:

Լիբանանի դեսպանն իր հերթին մեծապես կարեւորեց երկու երկրների հարաբերությունների ամրապնդումը եւ բարձր գնահատեց այդ գործում Հայ Եկեղեցու դերակատարությունը:

Վեհափառ Հայրապետն ու տիար Ժ. Մաքարոնը խոսեցին նաեւ Լիբանանի հայ համայնքի մասին: Այս առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսը գոհունակությամբ ընդգծեց, որ հայոց ցեղասպանությունից հետո Լիբանանի ժողովրդի բարյացակամ վերաբերմունքի շնորհիվ հայ ժողովրդի զավակները կարողացան կարճ ժամանակի ընթացքում Լիբանանում վերակազմակերպել իրենց ազգային, հոգեւոր-մշակութային կյանքը եւ մեծ ներդրում ունենալ երկրի տարբեր բնագավառներում:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը

Սկիզբը՝ էջ 1

Մեզանում նաեւ կարեւորվել է հոգեւոր արժեքների պահպանության եւ մարդկային կյանքում դրանց ամրապնդման համար քույր Եկեղեցիների եւ այլ կրոնների ներկայացուցիչների հետ միասնաբար հանդես գալու հրամայականը, հարգվել են հարեւան ժողովուրդների մշակութային-հոգեւոր յուրահատկություններն ու ազատությունները: Հայոց Եկեղեցու համար հասարակաց է եղել մարդկության ընդհանուր թշնամու՝ մեղքի դեմ պայքարը, երբ հասարակության մեջ գերիշխել են կրոնական անհանդուրժողականությունը, մշակութային-կրոնական թշնամանքը, մարդ անհատի իրավունքների ոտնահարումն ու բռնացումը, հանրային կյանքի բարոր ու աստվածահաճո ընթացքի խաթարումը: Ավելորդ չենք համարում այստեղ մեջբերել մեր Եկեղեցու կարկառուն մտածողներից մեկի՝ սբ Ներսես Լամբրոնացու միտքն այս մասին՝ ձեւակերպված դեռեւս ԺԲ դարի Կիլիկյան Հայաստանի բազմամշակութային-բազմազգ հասարակության պայմաններում. «Մարտ մեր հասարակաց՝ լիցի առ հասարակաց մեր թշնամին սատանայ, իսկ առ եղբարս՝ հանդարտ ուսաք լինել հանապազ» (Ատենաբանութիւն, էջ 122):

Հայոց Եկեղեցին այսօր էլ շարունակում է ընթանալ այս ոսկե կանոնի գծած ճանապարհով՝ մշտապես իր առաքելությունն իրականացնելով ի խնդիր հասարակաց բարօրության ու մարդկային աստվածատուր կերպարի պահպանման: Հայ ժողովրդի կյանքում խաղացած իր բացառիկ դերով Հայոց Եկեղեցին այսօր էլ պետք է մնա «կենդանի Աստծո եկեղեցին, ճշմարտության հաստատությունն ու սյունը» (Ա Տիմ. Գ 14): Հասարակական կյանքում Հայ Եկեղեցին՝ իբրեւ նվիրապետություն ու կառույց, երբեք միայնակ չի գործել: Հայ հասարակությունն իր դարերի պատմության ընթացքում շնորհներ ու աստվածատուր պարգեւներ է կուտակել Հայոց Եկեղեցում՝ մարդկային հոգեւոր կատարելության ու խիզախության հիացմունքի արժանի գործեր, հայ ժողովրդին անմնացորդ ծառայած սրբերի ու հայրապետների լուսավոր կերպարներ, որոնք այսօր Եկեղեցին Աստծո խոսքի քարոզչությամբ ու իր առաքելության իրականացմամբ պարզապես վերադարձնում է հայ ժողովրդին: Հասարակությունն այսօր Հայաստանում պիտի կարողանա ի պետս վեհագույն նպատակների օգտագործել ազգային-եկեղեցական ավանդությունից մեզ բաշխվող այս շնորհները, ճիշտ գնահատել ու հասկանալ քրիստոնեական անանց արժեքների վրա կառուցված Հայոց հոգեւոր հայրենիքի տարածական ու բովանդակային կարեւորությունը մերօրյա կրոնական ազատության փորձառության կերտման գործում:

Արդի կրոնական ազատությունը խարսխված է նաեւ միջկրոնական եւ միջեկեղեցական համագործակցության վրա, որին Հայ Եկեղեցին մեծապես ընդգրկված է ամենաբարձր մակարդակով: Մենք սերտ հարաբերություններ ունենք այլ հարանվանությունների հետ ինչպես Հայաստանում, այնպես էլ՝ արտերկրում: Էկումենիկ հարաբերությունների զարգացումն Ուղղափառ, Կաթոլիկ, մի շարք Բողոքական Եկեղեցիների հետ դրա վառ ապացույցն է:

Մեր ցանկությունն է, որ կրոնական ազատության, միջմշակութային երկխոսության եւ հանդուրժողականության վեհ գաղափարներով մեկնարկող այս համաժողովը դառնա եւս մեկ պատեհ առիթ՝ հասարակաց մեր ջանքերը հանուր մարդկության բարօրությանն ու խաղաղությանն ուղղելու համար: Հայրապետական մեր պատգամն ու մաղթանքն է ձեզ, համաժողովի հարգելի՛ մասնակիցներ, ջանք ու եռանդ չխնայել՝ նպաստելու եւ միասնական ուժերով ստեղծելու այն լուսավոր հասարակությունը, որտեղ ամենքս կարող ենք ապրել արժանապատվորեն՝ իբրեւ «հավասար մարդկային էակներ»:

Բարի ընթացք Ձեր աշխատանքներին:

Տեղի ունեցավ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի 2013-2014 թթ. ուսումնական տարվա բացման արարողությունը



Սեպտեմբերի 9-ին տեղի ունեցավ Մայր Աթոռ Սբ Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանի 2013-2014 թթ. ուսումնական տարվա բացման արարողությունը՝ հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մասնակցությամբ Մայր Աթոռի միաբանների, ճեմարանի դասախոսական կազմի ու սաների:

Տերունական աղոթքից, Հայաստանի Հանրապետության եւ ճեմարանի օրհներգերից հետո բացման խոսքով հանդես եկավ Մայր Աթոռ Սբ Էջմիածնի հոգեւոր-կրթական հաստատությունների վերատեսուչ, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Գեւորգ եպս Սարոյանը: Շնորհավորելով նոր ուսումնական տարվա բացումը՝ սրբազան հայրն անդրադարձավ ճեմարանի 2012-2013 ուսումնական տարվա ընթացքին եւ արձանագրված ձեռքբերումներին, ինչպես նաեւ տեղեկացրեց արձակուրդային շրջանում քարոզչական, հովվական, կրթական եւ սոցիալական ծրագրերում ճեմարանականների ունեցած ակտիվ մասնակցության մասին: Վերատեսուչն իր խոսքում նշեց, որ նոր ուսումնական տարեշրջանը նաեւ հոբելյանական է. 2014 թ. լրանում է Գեւորգյան ճեմարանի հիմնադրման 140-րդ տարին: Այս առնչությամբ սրբազանը տեղեկացրեց, որ նոր տարվա գործունեությունն ամբողջապես միտված է լինելու ըստ պատշաճի արժեւորելու ճեմարանի անցած հարուստ ստեղծագործական ուղին, ժառանգությունն ու ծանրակշիռ ազդեցությունը հայ կյանքի վերջին հարյուրամյակի վրա:

Հանդիսության ընթացքում ազգային երգերի կատարումներով եւ աստվածաշնչով հանդես եկան ճեմարանի սաները, որից հետո ներկաներին իր հայրական օրհնությունը բերեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Նորին Սրբությունը նշեց, որ ճեմարանի հարկից բազում լուսավոր մարդիկ են դուրս եկել, որոնց աշխատանքը եւ մտքի արգասիքները ոչ միայն զորացրել են հայրենին ու լուսավորել հայ ժողովրդի կյանքը, պայծառացրել Հայոց Եկեղեցին, այլեւ կերտել են փառքը հայ ժողովրդի: Խոսքն ուղղելով ճեմարանի սաներին՝ Վեհափառ Հայրապետն ընդգծեց, որ այդ փառավոր սերունդների ժառանգորդներ լինելու գիտակցությունը պետք է նպաստի առավել նախանձախնդրությամբ նվիրվելու իրենց ուսման աշխատանքին՝ կրթության գործին: Ամենայն Հայոց Կաթողիկոսը կարեւորեց հոգեւոր-կրթական հաստատության աղոթական կյանքը, խոնարհությունը, հնազանդության ոգին, կարգապահությունն ու ծառայանվիրումը, որոնք պետք է զարդարեն ճեմարանի շրջանավարտներին՝ ապագա եկեղեցականներին:

Վերջում Վեհափառ Հայրապետն անձնվեր աշխատանքի համար իր օրհնությունն ու գնահատանքը բերեց ճեմարանի տեսչությանը եւ դասախոսներին՝ համոզում հայտնելով, որ մշակված նոր կրթական ծրագրերն ավելի զորեղ պիտի դարձնեն հոգեւոր հաստատությունը՝ որպես գիտելիքի եւ հոգեւոր նկարագրի կերտման դարբնոց:

Հայոց եղեռնի 100-ամյա տարելիցին նվիրված՝ Մայր Աթոռի միջոցառումների հանձնախմբի ժողովը

Օգոստոսի 29-ին Մայր Աթոռ Սբ Էջմիածնում տեղի ունեցավ հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված՝ Մայր Աթոռի միջոցառումները նախապատրաստող հանձնախմբի ժողովը՝ նախագահությամբ հանձնախմբի ատենապետ, ԱՄՆ հայոց Արեւմտյան թեմի առաջնորդ Հովնան արք. Տերտերյանի:

Ժողովի ընթացքում քննարկվեցին եւ հստակեցվեցին Մայր Աթոռի կողմից ծրագրված միջոցառումները եւ դրանց կազմակերպման ժամանակացույցը, ինչպես նաեւ՝ հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի հետ համատեղ իրականացվելիք աշխատանքները:

Ժողովին մասնակցում էր նաեւ հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն, հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի քարտուղար Հայկ Դեմոյանը:

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

ՍԻՄԵՈՆ Կ ԵՐԵՎԱՆՑԻ (1763-1780)

Սկիզբը՝ թիվ 7-16

«Զբօսարանը» եւ «Տաղարանը» 1777 թվին կրկին հրատարակվեցին, սակայն առաջնարգասիք կարեւոր գործ եղավ «Տօնացոյցը», որն սկսեց տպագրվել 1774 թվից եւ ավարտվեց 1775-ի ապրիլի 7-ին: Դրա վրա աշխատեցին հինգ տարի, ինչի մասին գրված է վերջաբանում: Այն արդեն կատարյալ հրատարակություն էր: Հայտնի է, որ Հայ Եկեղեցու տոնակատարության կարգը հիմնված է յոթնօրյա դրության վրա, ուստի ամեն տարի միեւնույն ամսաթվին նույն տոնը չի հանդիպում, ինչպես ուրիշ Եկեղեցիներում: Այդ ընդհանուր շարժականությունը պահանջում էր, որ յուրաքանչյուր տարվա համար տոների մասնավոր դասավորություն կազմվեր, սակայն հաստատուն ձեւը չկար, եւ վիճակները կարող էին միեւնույն տոնը տարբեր օրերի դնել: Չկար նաեւ դասավորելու անհրաժեշտ հմտություն: Եվ երբ Վենետիկի Մխիթարյաններից Հակոբոս Չամչյանը 1757-ին «Լուսնացոյց», իսկ 1758-ից «Օրացոյց» անունով եկեղեցական գրքույկներ սկսեց հրատարակել՝ նշելով յուրաքանչյուր տարվա ամսաթվերը, լուսնի օրերը եւ տոների դասավորությունը, դրանք հայերի շրջանում մեծ ընդունելություն գտան եւ անգամ եկեղեցական տոների ու տոնակատարությունների ուղեցույց դարձան: Սակայն լինելով հռոմեադավանների հրատարակություններ՝ պարունակում էին Լատինական Եկեղեցու տոներ կամ էլ հայկական տոնակատարություններ, որոնք հեղեղված էին լատինամետ փոփոխություններով եւ ոչ զգաստներին գայթակղում էին: Պատահական չէ, որ Սիմեոնը Վենետիկի օրացույցը «Թունացոյց» կամ «Թունարան» է կոչում: Սիմեոնը, որ վաղուց ուշադրություն էր դարձրել այդ իրադրությանը, 1761-ին՝ Կ. Պոլսում նվիրակ եղած ժամանակ, տպագրել էր «Տարեկան օրացոյցը», որտեղ հայտնում էր, որ պատրաստ է նաեւ «Մայր տօնացոյցը», սակայն ո՛չ դա եւ ո՛չ էլ հաջորդ տարիների համար օրացույցներ հանդես չեկան: Սիմեոնը կաթողիկոսացավ եւ միայն տասը տարի անց կարողացավ տպարան հիմնել, որն սկսեց կատարելագործվել ու ամբողջանալ 1774 թվին:

Այդ տասը տարվա ընթացքում նա աշխատեց իր «Տօնացոյցի» վրա, որը բաժանվում է երկու հատորի, լրացրեց ու հղկեց: Տպագրության հանձնվեց 1774 թվին: Դրանցից երկրորդը տալիս է տարեկան դասավորության բոլոր պատահականությունները: Այն հույժ գնահատելի ու օգտակար գործ է եղել: Բոլոր հայ եկեղեցիները, որտեղ էլ որ գտնվեին, կարող էին միակերպ նշել իրենց տոնակատարությունները: Հետաքրքիր էր առաջին մասը, այսինքն՝ բուն տոնացույցը, որի մեջ նա ցանկացել է նորություններ մուծել. ինչ-ինչ տոներ տեղափոխել եւ ծիսական կամ տոնական պատշաճներն այլայլել: Մի քանի փոփոխության մասին վերը նշել ենք, սակայն ազգասիրական նպատակներով նա ազգային տոները փորձեց տեղափոխել շաբաթ օրերը: Օրինակ՝ Ներսեսի եւ Խադի տոնը Հոգեգալստյան չորրորդ երկուշաբթիից բերեց երկրորդ շաբաթ: Կամ՝ Տրդատի եւ Աշխենի ու Խոսրովիդխտի տոնը Հոգեգալստյան հինգերորդ երկուշաբթիից փոխադրեց չորրորդ շաբաթ: Չկամենալով շարունակել այդ փոփոխությունների շարանը՝ նշենք լոկ, որ կաթողիկոսն անդրադարձավ ծիսական եւ տոնական արարողություններին, եւ նրա գլխավոր կարգադրությունը եղավ «կիրակէ պահելու աւուրց» ցուցակ կազմելը: Հարկ է նշել, որ հարցին խորամուխ լինելը ցույց է տալիս, որ Հայոց Եկեղեցին խորշել է բնական կիրակիներից դուրս շաբաթվա մյուս օրերին կիրակե կամ կարգադրված տոն հաստատելուց: Դրա հետեւանքով տերունական տոները փոխադրվել են կիրակի, իսկ մեծ սրբերի հիշատակները, կատարվելով շաբաթ օրերին, տոնախմբվում են կիրակի: Այսպես՝ սբ Լուսավորչի, սբ Գեւորգի կամ սբ Հակոբի անունը կրող եկեղեցիներն իրենց տոնախմբությունները կատարում են կիրակի: Այլեւս չխորանալով խնդրի մեջ՝ հարկ ենք համարում արձանագրել, որ, ըստ երեւույթին, հայկական սովորույթը մյուս Եկեղեցիների նկատմամբ ստորադաս կարծելով՝ հայերի համար էլ շաբաթվա մեջ կիրակեանալու օրերը կազմեց: Մի բան, որ աննախադեպ էր:



Շարունակությունը՝ էջ 4

Ռուբեն Սեւակի անվան թանգարանի բացումը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Սեպտեմբերի 10-ին Մայր Աթոռ Սբ Էջմիածնում, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ Ռուբեն Սեւակի անվան թանգարանի բացման արարողությունը:

Ղազարապատ կոչված պատմական շենքում տեղակայված թանգարանում՝ հիմնանորոգված ֆրանսահայ Հովհաննես Չիլինգիրյանի՝ Ռուբեն Սեւակի եղբորորդու ազնիվ բարերարությամբ, ցուցադրված է Մայր Աթոռին հենց նրա նվիրաբերած բացառիկ եւ արժեքավոր շուրջ 200 կտավ, ինչպես նաեւ՝ նշանավոր նահատակ բանաստեղծ, արձակագիր եւ բժիշկ Ռուբեն Սեւակի նկարչական գործերից երկու ածխանկար, անձնական իրեր ու փաստաթղթեր, պատմական սրբազան ցուցանմուշներ եւ Հ. Չիլինգիրյանի հավաքածուից գեղանկարչական ու գրաֆիկական շատ գործեր այնպիսի նշանավոր նկարիչների, ինչպիսիք են Հ. Այվազովսկին, Վ. Մախոխյանը, Է. Շահինը, Հ. Հակոբյանը, Փափազը եւ այլք:

Բացման արարողությանը ներկա էին Մայր Աթոռի միաբաններ, Հայաստանում, Վրաստանում, Ռուսաստանում եւ Արեւելյան Եվրոպայում Հայ Կաթողիկե Եկեղեցու առաջնորդ Ռաֆայել արք. Մինասյանը, ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը, ՀՀ Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը, կրթության եւ մշակույթի գործիչներ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ բարերար Հովհաննես Չիլինգիրյանի՝ թանգարանի մուտքի ժապավենը կտրելուց հետո ներկաները մուտք գործեցին նորակառույց թանգարան, որտեղ Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվեց օրհնության արարողություն: Օրհնության կարգի ավարտին բացման խոսքով հանդես եկավ Մայր Աթոռի թանգարանների եւ արխիվի տնօրեն Ասողիկ քհն. Կարապետյանը, ով ներկայացրեց թանգարանում ցուցադրվող արժեքավոր հավաքածուն, ինչը ներշնչման կարեւոր աղբյուր պիտի դառնա համայն հայության համար: Այնուհետեւ խոսք ասաց Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը՝ իր երախտագիտությունը հայտնելով Վեհափառ Հայրապետին եւ տիար Հովհաննես Չիլինգիրյանին՝ նշելով, որ այս թանգարանը կդառնա մշակութային կարեւոր կենտրոններից մեկը հայոց կյանքում:

Իր սրտի խոսքն ասաց նաեւ թանգարանի բարերար տիար Հովհաննես Չիլինգիրյանը: «Այսօր մենք հրաշքի ենք ականատես լինում, որովհետեւ այս սուրբ հողի վրա վերակենդանացավ ու անմահացավ 1915 թ. Մեծ եղեռնի նահատակ, մեծանուն բանաստեղծ Ռուբեն Սեւակի հիշատակը»,- նշեց բարերարը՝ իր ուրախությունը հայտնելով Վեհափառ Հայրապետին՝ թանգարանի ծրագիրը կյանքի կոչելու

առիթով: Հովհաննես Չիլինգիրյանն Ամենայն Հայոց Կաթողիկոսին փոխանցեց նաեւ Ռուբեն Սեւակի դուստր Շամիրամ Սեւակի երախտագիտությունը եւ ջերմ շնորհավորանքները:

Արարողության ավարտին ներկաներին իր օրհնությունն ու պատգամը բերեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը.

«Այս թանգարանի հիմնումը հարգանքի տուրք եւ խոնարհում է ինչպես Ռուբեն Սեւակի, այնպես եւ Գրիգոր Զոհրապի, Սիամանթոյի, Վարուժանի, Կոմիտասի, մեր մյուս մեծերի, մեկ եւ կես միլիոն մեր անմեղ զոհերի հիշատակին, ովքեր չուրացան իրենց հավատքն ու հայրենիքը եւ ընդունեցին նահատակության պսակը: Նրանք նահատակվեցին՝ իրենց սրտում վառ պահելով տեսիլքը, որ ապրելու եւ հարատեւելու է հայ ժողովուրդը: Թանգարանը նվիրվում է հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցի ոգեկոչմանը եւ ունի առանձնահատուկ նշանակություն: Այն այցելուների միջոցով վերածվելու է ողողանջող անլռելի զանգակատան, որի ձայնը լսելի պիտի լինի աշխարհում՝ նպաստելով Ցեղասպանության միջազգային ճանաչմանն ուղղված ջանքերին:

Թանգարանը դառնում է անցյալի, ներկայի եւ գալիքի մեջ

անմահության ձայն, մահվանից վերածնվելու, նորից հառնելու եւ կյանքով հաղթելու ուղի: Այսօր մենք ոճրագործությանը պատասխանում ենք մեր ժողովրդի ազնիվ զավակի ու նահատակի հիշատակը հավերժացնելով, կործանմանը պատասխանում ենք կառուցումով, ավերմանը՝ վերաշինությամբ, մահվանը՝ կյանքով: Չարին բարիով պատասխանելու քրիստոնեական այս ոգին դարձել է մեր ժողովրդի նկարագիրն ու էությունը, որը միշտ գործացնելու է մեզ՝ ապրելու եւ արարելու, եւ ինչպես մեր նահատակ մեծ բանաստեղծ Ռուբեն Սեւակն է ասել՝ «...ո՛վ որ Կեանքին հաւատքն ունի՝ երկինքեն բռնուելիք չուան մ'ունի: Ո՛վ որ Յաղթութեան յոյսն ու Երջանկութեան սէրն ունի՝ ան իր ուսերուն վրայ երկու թեւեր ունի ...»:

Իր խոսքում Ամենայն Հայոց Հայրապետը բարձր գնահատանք հայտնեց մեծարգո տիար Չիլինգիրյանին՝ սիրահոժար հանձնառության, նախանձախնդիր ոգու եւ ազնիվ բարերարության համար: *«...Իրականացավ տարիների Ձեր երազը, մեծարգո՛ բարերար, ազգիս սրբություն սրբոց Սուրբ Էջմիածնում՝ Ղազարապատի պատմական կառույցում հաստատվեց Ռուբեն Սեւակի թանգարանը, որը Վազգեն Կաթողիկոսի կողմից կառուցված Հայոց ցեղասպանության հուշարձանի հետ, իբրեւ խնկարկում, լուսավոր է պահելու Եղեռնի նահատակների հիշատակը, մեր արդար դատը պաշտպանելու ոգին եւ մեր ժողովրդի անմահության ոգեկոչումը հոգեւոր խորհուրդը»,-* նշեց Վեհափառ Հայրապետը:

Նորին Սրբությունն իր օրհնությունը բերեց նաեւ թանգարանի բացման աշխատանքներում իրենց ներդրումն ունեցած բոլոր անձանց, ապա աղոթքով բարի եւ արդյունավոր ընթացք մաղթեց թանգարանի առաքելությանը:

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1960-1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ԱՐՁԱԿ

Մասնակի կրճատումներով

Սկիզբը՝ թիվ 11-16

Ժամանակակից հայ արձակում առանձնահատուկ տեղ ունի **ժողովրդի պատմական անցյալի** գեղարվեստական պատկերումը: Պատմության հիշողությունը լուսավորում է թե՛ հեռավոր ժամանակների խորքը եւ թե՛ ոգեկոչում հայ ժողովրդի ողբերգական ու հերոսական պայքարի էջերը, որոնց մի ծայրին 1915-ի դրվագներն են, մյուս ծայրին՝ Երկրորդ աշխարհամարտում պայքարի ելած հայ քաջորդիների սխրանքն ու թիկունքի կյանքը:

Պատմավեպը հայ արձակի ավանդական տեսակներից է, որը հայ գրականությունը հարստացրել է արժանահիշատակ երկերով: Այդ կենսունակ ավանդույթներն են շարունակում նաեւ ժամանակակից հայ գրողները:

Պատմավեպի տարատեսակներով կամ պատմական ժամանակաշրջանի՝ հիմնականում 19-րդ դարի վերջի եւ 20-րդ դարի առաջին երկու տասնամյակների հայ ժողովրդի պատմության վիպայնացման սկզբունքներով են գրված Վ. Խեչումյանի «Գիրք լինելության» (1966), Գ. Մահարու «Այրվող այգեստաններ» (1966), Ս. Ալաջաջյանի «Եղեգները չխոնարհվեցին» (հ. 1, 1966, հ. 2, 1967), Ս. Զորյանի «Վարազդատ» (1967), Ս. Այվազյանի «Ճակատագիրն հայոց» (1967), «Առավոտ լուսո» (1976), Հ. Խաչատրյանի «Էրեբունի» (1968), «Տիգրան Մեծ» (1972), «Արտավազդ» (1975), «Արտաշես» (1980), Խ. Գյուլնազարյանի «Նռանի» (1971), Բ. Վերդյանի «Ծաղիկներս մնացին հեռվում» (1969), Հ. Սիրասի «Հայրենի աշխարհ» (1964), Ս. Խանզադյանի «Խոսե՛ք, Հայաստանի՛ լեռներ» (1976), «Թագուհին Հայոց» (1978), Պ. Զեյթունցյանի «Արշակ Երկրորդ» (1977), Խ. Դաշտենցի «Ռանչպարների կանչը» (1979), Հ. Ղուկասյանի «Բոգդան Սալթանով» (հ. 1, 1980, հ. 2, 1985), Վ. Գրիգորյանի «Հավերժական վերադարձ» (1981), «Դար կորստյան» (1985), Մ. Շաթիրյանի «Արծաթե դար» (հ. 1, 1983, հ. 2, 1986) վեպերը, Մ. Գալշոյանի «Զորի Միրոն», «Կածանի ճամփորդներ» (1969), Ռ. Արամյանի «Ռուսա, որդի Արգիշտի» (1970), Հ. Մելքոնյանի «Քարավան», «Իմ Մելքոն պապը» (1971) վիպակները: Թվարկումը, իհարկե, լրիվ չէ, թեեւ այսքանով իսկ պատկերացում է տալիս այն բուռն հետաքրքրության մասին, որ կա պատմության նկատմամբ: Անմտություն է կարծել, թե նշված բոլոր երկերն էլ գեղարվեստական արժեք են ներկայացնում, դեռ ավելին՝ քիչ չեն նյութի չարաշահման դեպքերը: Բայց եւ հետաքրքրականն այն է, որ պատմությանն ուղղված հայացքն աստիճանաբար լայնացնում է իր տարածժամանակային ընդգրկումը եւ աչքի ընկնում նյութի յուրացման նոր կողմերով: Հայ դասական պատմավեպը, փաստագրական հենակետ ունենալով 5-րդ դարի հայ պատմագրությունը, հիմնականում անդրադառնում էր 4-5-րդ դարերի դեպքերին: Միաժամանակ յուրացվում էր նաեւ հետագա դարերի նյութը, ինչպես Մուրացանի «Գեւորգ Մարզպետունին», Ռաֆֆու «Դավիթ Բեկը», որոնց համար եւս կար հայ մատենագրության հարուստ փաստական նյութ: Բայց, ահա, ժամանակակից գրողները պատկերում են նաեւ պատմական այնպիսի մի ժամանակաշրջան, որի մասին պատմագիտությունը բավականին քիչ տեղեկություններ ունի: Բայց եւ գրողի հայացքը, ի մի բերելով սեպագրերից եւ այլ աղբյուրներից պահպանված կցկտուր փաստերը եւ երեւակայությամբ թափանցելով դարերի խորքերը, վերականգնում է կորուսյալ ժամանակի հետքերը:

Այդպիսին է **Ս. Խանզադյանի** «Թագուհին Հայոց» վեպը, որի գործողություններն ընդգրկում են Ք. ծ. ա. 14-րդ դարի եղելություններ: Պատումի հիմքում ընկած է հայ ժողովրդի նախնիների՝ հայասա ցեղախմբի պայքարը խեթական հզոր տերության դեմ: Հայասայի Հուգաննա թագավորի որդին՝ Կարաննին, զորախմբով հսկում է իր երկրի սահմանները եւ պատերազմում հաղթում երկիր ներխուժած խեթերին: Երկրի ամրապնդման եւ անկախության այս հիմնական գաղափարի շուրջ էլ ծավալվում են մյուս գործողությունները՝ ապստամբություններ, պետական դավաճանություններ եւ այլն: Հետաքրքրական կերպար է Մարի-Լույսը՝ երկրի թագուհին, որը հեթանոսության շրջանում պայքարում է բազմաստվածության դեմ՝ հանուն միաստվածության, հանուն Մաժան-Արամազդի եւ նրա տիկնոջ՝ Հեպիտ-Անահիտի: Թագուհին պայքարում է նաեւ աստվածներին մարդ զոհաբերելու դաժան ծեսի դեմ:



Խաչիկ Դաշտենց

Բախումն այս դեպքում իրար դեմ է հանում քրմերին եւ առաջին հերթին՝ մեծ քուրմ Արվանդ-Բիխունուն եւ Մարի-Լույսին: Հաղթում են քրմերը՝ նահատակելով երկրի թագուհուն: Շունչ ու ոգի տալով հնագույն ժամանակներից պահպանված մի քանի արձանագրությունների՝ վիպասանը ընդլայնում է ժողովրդի պատմական հիշողության ժամանակային սահմանները:

Այս դեպքում, իհարկե, չի բացառվում ենթակայական մոտեցումը: Պատմական միջավայրն ու երկրի ներքին կյանքը, մարդկային հարաբերություններն ու կենցաղը, փաստերի բացակայության պատճառով, ավելի շատ հեղինակային երեւակայության արդյունք են: Այլ կերպ չէր էլ կարող լինել:

Շարունակությունը՝ էջ 6

ՍԻՄԵՈՆ Ա ԵՐԵՎԱՆՑԻ (1763-1780)

Սկիզբը՝ էջ 3

Այդ բանը նա սկսել էր դեռ «Տօնացոյցը» կազմելուց առաջ, երբ սբ Լուսավորչի պատվին ողջ հայության համար հատուկ կոնդակով կիրակիացրել էր տարեկան հինգ օր: Նոր «Տօնացոյցում» նա ավելացրեց նաեւ Ծնունդի, Զատկի, Վարդավառի, Աստվածածնի եւ Խաչի երկրորդ օրերը, նաեւ՝ Զատկի երրորդ եւ Ծնունդի ութերորդ օրերը, Տյառնընդառաջի, Համբարձման եւ Ավագ հինգշաբթիի, Աստվածածնի ավետման, ծնունդի, ընծայման եւ հղության օրերը, հրեշտակապետների եւ ամենայն սրբերի տոները: Այսպիսով՝ Սիմեոնի կարգադրությամբ տարվա մեջ կիրակեանալու 21 օր մուծվեց հայկական տոնակատարության մեջ: Տոնական արարողություններում էլ նա փոփոխություններ մտցրեց: Մեծ պահքի կիրակիներից ջնջեց «յարութեան յիշատակութիւնը»՝ մեջտեղ բերելով «յարութեան ակնկալութիւն» ձեւը: Յուղաբերից ավետարանից զեղչեց հարության հատվածը՝ թողնելով միայն թաղմանը եւ այլն եւ այլն:

Սիմեոնի նորամուծություններ մասին ժամանակին խիստ քննադատություններ եղան, եւ անգամ հայտարարվեց, որ Գրիգոր Վկայասերը բանադրել է նրանց, ովքեր կփորձեն օտար երեւույթներ մուծել իր հաստատած տոնացույցի մեջ, եւ որ Սիմեոնը խախտել է այդ: Իրավացի է Մ. Օրմանյանը, երբ գրում է, թե ոչ մի արգելք չկար, որ Սիմեոնը կարողանար ծիսական կանոն սահմանել, ինչպես դա արվել էր Վկայասերից առաջ եւ հետո: Նա իմացել է իր իրավունքը եւ այն գործադրել է: Խնդիրն այն է, թե պահանջվո՞ւմ էին այդ փոփոխությունները: Մ. Օրմանյանի կարծիքով՝ Սիմեոնը կամեցել է ծիսական տարբերություններով դուրս թողնել հայ կաթոլիկներին հայկական շրջանակից եւ խափանել նրանց ազդեցությունը՝ անգործածելի դարձնելով նրանց օրացույցը: Պատահական չէ, որ հայ կաթոլիկները, մասնավորապես Մխիթարյան ու Անտոնյան միաբանությունները եւ Լիբանանի կաթողիկոսարանը, հին տոնացույցը պահեցին եւ չհետեւեցին Սիմեոնի փոփոխություններին: Թերեւս ավելի ճիշտ կլիներ կաթոլիկներին նմանությամբ պահել, քան թե վանել, որպեսզի տարբեր ինքնությամբ գոյություն ունենալու իրավունք չստանային, ինչը նրա գլխավոր նպատակն էր: Տոների տեղափոխությունն ինչ-որ մեծ նշանակություն չուներ: Այդ փոփոխությունների մեջ իսկապես արժեքավոր էր Առաջին լուսավորիչների տոնի կերպավորությունը՝ իբրեւ վառ նշան Հայ Եկեղեցու առաքելականության: Մյուս փոփոխություններն առանձին կարեւորություն չունեին: Սակայն Սիմեոնի ձեռնարկն ընդհանուր առմամբ պախարակելի չէ: Միայն կարելի էր փափագել, որ մեկ այլ կաթողիկոս էլ ազգային տեսակետից ուժեղացներ հայկական «Տօնացոյցը»՝ նրա մեջ մուծելով նախալուսավորչյան շրջանի առաքելաշավիղ հայրապետներին, հատուկ տոներ սահմանելով Որդիներից, Թոռներից եւ Թարգմանիչներից յուրաքանչյուրի համար, հիշատակներ հաստատելով այն քաջարի նահատակների ու նոր վկաների համար, որոնց պատմությունը չի մոռացել:

Սիմեոնը 1776 թվականի ընթացքում սկսեց բոլոր ուղղություններով ցրել իր տպած «Տօնացոյցը»: Նա պատվիրեց ողջ հայությանը 1777 թվի սկզբից նոր տոնացույցով առաջնորդվել: Էջմիածնում եւ պարսկահպատակ վիճակներում նոր «Տօնացոյցն» առանձին դժվարությունների չհանդիպեց, սակայն դրությունն այլ եղավ թրքահայ վիճակներում եւ մանավանդ՝ Կ. Պոլսում: Պատճառը կաթոլիկամետ շարժումն էր, որովհետեւ դրա հետեւորդները ծանր ընդունեցին Որոտնեցուն եւ Տաթեւացուն սրբերի կարգում տեսնելը, որն ուղղակի իրենց ընթացքի դատապարտությունն էր: Զաքարիան դրան նույնպես կողմ չէր, սակայն զուտ աձնական եւ ոչ թե հռոմեամետներին հարելու պատճառով: Նա տեսնում էր իր ուսումնական եւ անձնական առավելությունները, Կ. Պոլսի պատրիարքության տիրական դիրքը, ուստի ծանր էր տանում, որ այդ ամենն արվել է՝ առանց իր հետ խորհրդակցելու, առանց իր կարծիքն իմանալու: Նա մի պահ կամեցավ ընդդիմանալ կատարվածին, սակայն մեծ պատկառանք ուներ իր ուսուցչի նկատմամբ, ուստի 1777 թվի սկզբից Կ. Պոլսում կիրառեց նոր տոնացույցը:

Բասմաջյանի հուզումնաշատ շրջանը եւ Զաքարիայի սկզբնական հանգիստ կեցվածքը քաջալերեցին կաթոլիկամետներին, որոնք սկսեցին համարձակորեն հանդես գալ պատրիարքարանի դեմ: Նրանք մինչեւ իսկ դիմեցին սուլթանին, թե պատրիարքն անիրավաբար տուրքեր է հավաքում, այլեւ նեղում է իրենց: Պատրիարքին մեղադրում էին հակապետական գործունեության մեջ. ասում էին, որ Աջեմի երկրից է, այսինքն՝ Պարսկաստանից, կողոպտում է ժողովրդին, գանձեր է կուտակում ու ուղարկում Աջեմիստան, որին ուզում է դուրս բերել սուլթանի տերության դեմ: Խնդրում էին կարգադրել պատրիարքին, որ նա իրենց չնաղացնի իսպառ եւ հրամայի մի գլխավոր նշանակել, քանի որ կամենում էին դուրս գալ նրա իշխանությունից: Զաքարիան 1778 թվի փետրվարի 21-ին՝ Մեծպահոց առաջին չորեքշաբթի օրը, Մայր եկեղեցում ազգային ժողով հրավիրեց: Դրան մասնակցեցին գլխավոր եպիսկոպոսները, վարդապետները, մեծամեծ իշխանները, համքարությունների գլխավորները եւ բազմաթիվ մարդիկ՝ հասարակ ժողովրդից. շուրջ 1000 մարդ: Զաքարիան, ժողովը բացելով, կացությունը բացատրեց եւ զգացնել տվեց, որ ազգի մեջ տարաձայնություններին պետք է վերջ տալ: Ժողովը լիովին համաձայնեց պատրիարքի հետ եւ նրան լիազորեց ներքին միջոցներով արգելել կաթոլիկության տարածումը: Նա կարող էր ոչնչացել կաթոլիկամետներին: Ժողովը դիմեց նաեւ իշխանություններին՝ ցույց տալով օտարամետների վտանգավորությունը պետության համար եւ խնդրելով կառավարության օգնությունը: Խնդրագիր ուղարկեց կառավարություն՝ կնքված ու հաստատված բազմաթիվ ստորագրություններով: Խնդրագրում նշվում էր կաթոլիկամետների հարաբերությունները եվրոպացիների հետ, սակայն առանց չարամիտ բնութագրումների: Ասվում էր, որ գաղտնի հաճախում են ֆրանկների եկեղեցիները, շարժվում են ֆրանկների օրենքներով ու կանոններով եւ տները վերածել են կաթոլիկական եկեղեցիների:

Խնդրագիրն անմիջապես չմատուցվեց, քանի որ Զաքարիան փորձեց ներքին միջոցներով պայքարել կաթոլիկամետների դեմ: Նախ աշխատեց պարզել իրերի իրական կացությունը. թե որքան են նրանց հետեւողները: Դրա համար քահանաներից պահանջեց անվանական ցուցակներ կազմել, ապա գնալ նրանց տները, որ խրատելով դարձի բերեն: Ապրիլի 8-ին՝ Զատկից հետո, Զաքարիան կարգադրեց անուղղելիներին չմկրտել, չպսակել ու չթաղել: Հռոմեամետների համար ցնցող էր հատկապես վերջինը, երբ մեռելն անթաղ էր մնում մինչեւ անգամ վեց օր: Սակայն քաղաքում ժանտախտ սկսվեց, եւ վտանգավորությունը հաշվի առնելով՝ Զաքարիան կարգադրեց՝ մահացածներին անշուք թաղել: Ժանտախտն իսկական ավեր գործեց, բայց օգոստոսի 12-ից սկսած՝ նվազեց, իսկ նոյեմբերին իսպառ մարեց: Զաքարիան այդ շրջանում շատ էլ չէր սրում պայքարը, ինչը համարձակություն ներշնչեց կաթոլիկամետներին, որոնք նորից դիմեցին կառավարությանը՝ նույն մեղքերի մեջ մեղադրելով պատրիարքին: Դա արդեն ստիպեց Զաքարիային՝ կառավարությանը մատուցել խնդրագիր-բողոքագիրը: Այն անձամբ հանձնվեց սուլթան Աբդուլ-Համիդին՝ Պեշիկթաշու պալատի մոտ, երբ սուլթանը վերադառնում էր աղոթարանից: Խնդրագիրը հանձնեցին Սարգիս Հաճնցի վարդապետը՝ այլ վարդապետների հետ, եւ փոխանորդ Վարդան Պապան՝ մի խումբ քահանաներով ու իշխանավորներով. թվով 80 մարդ:

Շարունակելի

Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր

ՈՎՔԵ՞Ր ԵՆ ՔՐԻՍՏՈՍԻ ՆԱԽԱՆՁԱՀՈՒՅՑ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԸ

(ՇԱՀԱՊԻՎԱՆԻ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԴՐՈՒԹՅԱՆ ՎԱՎԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ)

Սկիզբը՝ թիվ 15-16

Նախադրության բնագրի հնության եւ վավերականության օգտին են վկայում հետեւյալ անհերքելի փաստերը, որոնց ուշ չեն դարձրել նախորդ ուսումնասիրողները՝ թեկուզեւ ավելի մանրախնդիր եւ անհամեմատ ծավալուն իրենց հրապարակումներով, ինչպիսին է Ակինյանի վերոհիշյալ հետազոտությունը, որի մեջ արծարծված, թվում է թե՝ հիմնավոր եզրակացություններն արձանագրության խմբագրությունների վավերականության վերաբերյալ գլխիվայր են շրջում պատմական եւ բանասիրական իրողությունը, ինչպես ցույց են տալիս ստորեւ իմ մատնանշած փաստարկները.

ա) Իրականում, ինչպես տեսանք, այս ամենով Շահապիվանի ժողովի մթնոլորտը ներկայացնում է ճիշտ Մաշտոցի Վարքի ստեղծման ժամանակը եւ նրա աշակերտներին: Այն, որ գլխավոր եպիսկոպոսների վիճակները չեն նշված Նախադրության մեջ, ինչպես եւ նրանց անփույթ հերթակարգը պետք է բացատրել հապճեպ շարադրմամբ, օրինակ՝ Եվղաղ եպիսկոպոսը նշված է 1-ին տեղում, իսկ անհամեմատ հայտնի Ղեւոնդ երեցը՝ ութ երեցների շարքում 7-րդն է: Եթե երեցների անունները հետագայում մուծված լինեին Նախադրության մեջ, ապա ս. Ղեւոնդի անունը երեւելի տեղում պետք է հիշվեր եւ ոչ թե վերջընթեր տեղում, որովհետեւ 454-ին Պարսկաստանում նահատակված բոլոր եպիսկոպոսները հետագայում նրա անունով կոչվեցին սուրբ Ղեւոնդյանք:

բ) Նախադրության մեջ առաջին անգամ չորս ավագ նախարարների շարքում նշվում է Հայոց սպարապետ Մանաճիհր կամ Մանաճիրի Ռշտունու անունը: Ակնհայտ է, որ այդ ավագ նախարարների անձնանունները չէին կարող հանված լինել Արտաշատի 450 թվի ժողովի ցուցակներից, քանի որ Մանաճիհր Ռշտունու մասին ոչ միայն այդ ցուցակներում, այլեւ առհասարակ Եղիշեի եւ Ղազարի պատմություններում որեւէ հիշատակություն չկա: Կնշանակի՝ Մանաճիհր Ռշտունու հնագույն հիշատակությունը պատկանում է «Նախադրութիւն» կոչված բնագրին: Ն. Ակինյանին ոչ միայն անհայտ է մնացել այս իշխանը, այլեւ նա չի էլ ջանք դրել՝ որեւէ տեղեկություն գտնելու նրա մասին, թեեւ արդեն հրապարակի վրա էր Հր. Աճառյանի անձնանունների բառարանը հետեւյալ նշումով. *«Մանաճիհր Ռշտունի, անդամ Շահապիվանի ժողովի 444 թ.: Ատոմ Գնունու հետ իր զորքով կանչվեց Պարսկաստան՝ Հազկերտի կողմից. բայց չլսելով նրա հրապուրանքը՝ հետ քաշվեց գնաց Ռշտունիք. Պարսիկները հասան եւ բոլորին նահատակեցին...»* (Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատոր Գ, Երեւան, 1946, էջ 192-193):

Այստեղ վկայված Մանաճիհր Ռշտունին միանգամայն տարբեր է Փավստոս Բուզանդի եւ Մովսես Խորենացու հիշատակած չար եւ անօրեն համանուն զորավարից՝ Հայոց հարավային զորքի սպարապետ Մանաճիհր Ռշտունուց, որը Հայոց Խոսրով Փոքր թագավորի հրամանով (4-րդ դարի 30-ական թթ.) ուղարկվեց ապստամբած Աղձնյաց Բակուր բդեշխի դեմ եւ արհամարհելով Մծբնա Հակոբ հայրապետին՝ գազանաբար ծովահեղձ արեց, ըստ Փավստոսի, գերի վերցրած ութ հարյուր հոգու (Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց. Բնագիրը Ք. Պատկանյանի, Երեւան, 1987, Գ, Ժ, էջ 40), իսկ ըստ Խորենացու՝ ութ սարկավագի (Խոր., Գ, Է, էջ 263-264), որի համար ինքը՝ Մանաճիհր Ռշտունին, եւ իր Ռշտունյաց գավառն արժանացան Հակոբ Մծբնացու անեծքին:

Թեեւ Շահապիվանի ժողովում Վարդան Մամիկոնյանը հանդես է գալիս սոսկ իբրեւ ավագ նախարար՝ առանց «սպարապետ Հայոց» տիտղոսի, բայց եւ այնպես վիճելի է նաեւ Նախադրության մեջ ավագ նախարար Մանաճիհր Ռշտունուն վերապահված «սպարապետ Հայոց»-ը, այլապես վերջինս՝ որպես ամենայն Հայոց զորագլուխ, պետք է ներկայացված լիներ պետական ավագանու մեջ՝ մարզպանի, հազարապետի եւ մաղխազի կողքին եւ ոչ թե ավագ նախարարների շարքում՝ Արշավիր Կամսարականից հետո: Հավանորեն միջնադարյան գրիչները Շահապիվանի ժողովի մասնակից Մանաճիհր Ռշտունուն նույնացրել են Դ դարի առաջին կեսի վերոհիշյալ սպարապետ Մանաճիհր Ռշտունու հետ եւ այս պատճառով նրա անվանը կցել են «սպարապետ Հայոց» տիտղոսը:

Չնայած, որ Ն. Ակինյանին բոլորովին անհայտ է Շահապիվանի ժողովին մասնակից այս երկրորդ Մանաճիհր Ռշտունին, բայց վերջինս իրոք պատմական անձ է. Ատոմ Գնունին եւ Մանաճիհր Ռշտունին այն նախարարներից են, որոնք 448-449 թվին արքայից արքա Հազկերտ Բ-ի առաջին հրովարտակով ներկայանում են Պարսկաստանի Ապար աշխարհ (Եղիշէ, էջ 10), բայց չհնազանդվելով հավատն ուրանալու նրա պահանջին՝ իրենց զորախմբերով փախչում են Հայաստան: Հազկերտ Բ-ի հրամանով ուղարկված պարսկական ստվար զորքը հետապնդում է նրանց: Ատոմ Գնունին իր Վարոս որդու եւ զորախմբի հետ նահատակվում է Անձեւացյաց գավառում, իսկ Մանաճիհր Ռշտունին հասնում է Ռշտունիք եւ այստեղ նահատակվում իր զորախմբով Ոչխարանոց գյուղում, որի համար էլ նրանց նշխարների վրա կառուցված վանքը կոչվեց Ոչխարանից վանք (Մ. Չամչյանց, հ. Բ, էջ 20-21):

Վարդանանց պատմության երկրորդ եղանակում Եղիշեն հիշատակում է Հայոց բուն ավագ նախարարներից չորս զինվորի՝ առանց նրանց անունը տալու, որոնք կտտանքների ենթարկվեցին Հազկերտի հրամանով՝ հավատը չուրանալու համար, եւ խիստ գանահարվելուց հետո կապանքներով բանտ նետվեցին, իսկ մյուս նախարարներին Հազկերտը առժամանակ խաբեությամբ ներեց՝ նրանց մեղքը մոգերի խրատով գցելով այդ չորս նախարարների վրա. «Եւ ահա իշխանութիւն առեալ չարասէր սպասաւորացն, զի զչորս զինուորսն ի բուն աւագացն մատուցեն ի փորձութիւն տանջանացն: Եւ զառաջեաւ դատեալ բազում հարուածովք, նովին կապանօք անցուցին ի տեղիս արգելանին: Իսկ այլոցն խաբէութեամբ առ ժամանակ մի թողութիւն արարեալ, եւ զամենայն վնասուն պատճառս արկանէր զկապելովքն. եւ զայս առնէր սատանայական խրատուն» *(Եղիշէ, էջ 20)*:

Շարունակությունը՝ էջ 7

ԱԹ-ԹԱՄԱՀԻ

Սկիզբը՝ թիվ 9-12, 14-15

Ալ-Ֆադըլն Ամըրին տարավ իր մոտ եւ սկսեց տանջել՝ պահանջելով տասը միլիոն դըրհեմ՝ խեղելով ու ենթարկելով ամեն տեսակի կտտանքի, բայց Ամըրը հրաժարվում էր դրամ տալուց: Այն ժամանակ ալ-Ֆադըլը պահանջն իջեցրեց մինչեւ հինգ միլիոն, բայց Ամըրը մերժեց եւ այդ պահանջը: Ալ-Ֆադըլը պատրաստ էր բավարարվել երեք միլիոնով, սակայն Ամըրը, միեւնույն է, հրաժարվում էր վճարել: Ալ-Ֆադըլն սկսեց Ամըրին տանջել ավելի խստորեն, բայց հետո վախեցավ՝ հանկարծ նրան մահու չափ չտանջի, եւ ինքը պատասխանատու չդառնա այդ դրամի համար՝ որպես պարտապանին մահվան հասցնող, եւ անցավ ավելի մեղմ միջոցների, սկսեց նրբորեն վարվել նրա հետ, նրան պատվավոր զգեստ հագցրեց, սենյակ տրամադրեց ու հարմարություններ՝ մի քանի օր, իսկ հետո հիշելով, որ ես Ամըրի անունից առաջարկել էի երկու միլիոն՝ քաղաքավարի խնդրեց նրան՝ վճարել այդ գումարը: Ամըրը պատասխանեց, որ ինքը երբեք այդքան դրամ չի ունեցել եւ որ ինքը բնավ ինձ չի առաջարկել վճարել այն:

Եվ ալ-Ֆադըլը եկավ ալ-Մամունի մոտ, ամեն ինչ պատմեց՝ ինչպես է ինքն Ամըրին տանջել՝ նախ պահանջելով տասը միլիոն, ինչպես աստիճանաբար պակասեցրել է գումարը, ինչպես փոխել է վերաբերմունքը եւ պատրաստակամություն է հայտնել բավարարվելու եւ միլիոն դըրհեմով, ինչպես Ամըրը կտրուկ հերքել է իր՝ միջոցներ ունենալը եւ պնդել, թե երբեք այդպիսի վճար չի առաջարկել ինձ: Իսկ ես ներկա էի այդ պահին:

Ալ-Մամունն ամբողջովին համբերությունը կորցրեց եւ պատրաստ էր հաշվեհարդարի ենթարկելու ալ-Ֆադըլին: Այնժամ ես ասացի. «Ո՛վ առաջնորդ ուղափառների, մարդկանց նույն չափով չի կարելի չափել. դաժանությունը բոլորին չէ որ ազդում է: Ալ-Ֆադըլը կարծում էր, թե ես սխալ եմ վարվում Ամըրի հետ, բայց երբ Ամըրն ընկավ իր ձեռքը, ոչինչ չկարողացավ անել: Եթե դու ինձ թողնեիր ինքնուրույն գործելու, ես առանց դժվարության նրանից կստանայի երեք միլիոն, որովհետեւ ահա Ամըրի՝ իր ձեռքով ցուցակագրածը»: Եվ ես հանեցի թուղթն ու դրեցի խալիֆի առջեւ. «Եթե գիտենայի,- շարունակեցի ես,- որ ուղղափառների առաջնորդը կընդունի երեք միլիոնը, նրան կառաջարկեի այդպիսի վճար: Ես ասացի երկու միլիոնի մասին՝ ենթադրելով ավելացնել եւս մեկ, եթե խալիֆը չի ցանկանում բավարարվել երկուսով: Իսկ այժմ, երդվում եմ ալլահով, բան չի ստացվի, եւ այն բանից հետո, ինչ արվեց նրան, Ամըրը ոչինչ չի տա: Եթե ուղղափառների առաջնորդը համարում է, որ Ամըրին պետք է մահապատժի ենարկել, դա իր գործն է, բայց համենայն դեպս այժմ արդեն ոչ մի հնարավորություն չկա Ամըրից որեւէ բան կորզելու»:

Ալ-Մամունը վրդովվեց եւ մտահոգ կախեց գլուխը, սակայն շուտով բարձրացրեց ու ասաց. «Լա՛վ, չլինի այնպես, որ իմ գրագիրներից կամ նաբաթ *(նաբաթ - զավթիչ արաբներն արհամարհանքով այդպես են անվանել Սիրիայի ու Իրաքի բնիկներին՝ արամեացիներին)* պաշտոնյաներից մեկն ինձնից մեծահոգի, ազնիվ եւ իմաստուն երեւա: Մուհամմա՛դ, ես քեզ եմ բաշխում Ամըրի պարտքը, վերցրու եւ ինչ ուզում ես արա նրան, ինչ կամենաս»: Եվ ես Ամըրին վերցրի ալ-Ֆադըլ իբն Մարվանի տնից եւ պատշաճ պատիվներով ուղարկեցի տուն»:

▼▼▼

Ահա թե ինչ պատմեց ինձ Աբու-լ-Հասան Ալի իբն Ահմադը, որ հայտնի է ալ-Խորասանի անունով եւ Մուազզզ ադ-Դաուլեայի կառավարիչն էր:

«Մի անգամ Մուազզզ ադ-Դաուլեայի հետ խալիֆի պալատում էի՝ խալիֆ ալ-Մութի ընդունելությանը: Երբ ընդունելության կարգն ավարտվեց, Մուազզզ ադ-Դաուլեան ինձ ասաց. «Նրան ասա, որ ես կուզենայի շրջել պալատում եւ տեսնել այգիներն ու բակերը: Որեւէ մեկին չի՞ հրամայի՝ ինձ տանել եւ ցույց տալ այդ ամենը»: Ես նրա խոսքը խալիֆի համար թարգմանեցի արաբերեն, եւ նա իր ծառա Շահիկին ու հաջիբ իբն Աբի Ումարին հրամայեց այդ անել»:

Այդ երկուսը Մուազզզ ադ-Դաուլեայի առջեւից էին ընթանում, իսկ ես գնում էի վերջից: Երբ խալիֆից հեռացանք, նրանք կանգ առան ու ասացին. «Էմի՛ր, պետք չէ, որ պալատը դիտես շատ մերձավորներով. ընտրիր երկու-երեքին՝ ում կուզես, մյուսներին դուրսը թող»: Մուազզզ ադ-Դաուլեան իր հետ վերցրեց իր գրագրին՝ աս-Սայմարիին, եւ մոտ տասը հաջիբ ու ծառա: Իսկ մնացած ծառաներին ու զորականներին թողեց ընդունարանում: Ես կանգնեցի գոտիս ձգելու այն ժամանակ, երբ Մուազզզ ադ-Դաուլեան Շահիկի ու իբն Աբի Ումարի հետ շարունակեց գնալ՝ ինձ չսպասելով: Էմիրն արագ էր գնում, իսկ ես, գոտիս ձգելով, հասա նրան եւ ետեւից քաշեցի հագուստը: Երբ նա դարձավ, նրան պարսկերեն ասացի. «Հասկանո՞ւմ ես՝ որտեղ ես: Ո՞ւր ես շտապում: Տեղյակ չե՞ս, որ այստեղ հազարավոր էմիր ու հազարավոր վեզիր են սպանվել. ինչ կարիք կա, որ առանց թիկնապահի շրջես այսպես:

Շարունակությունը՝ էջ 6

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1960-1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Սկիզբը՝ էջ 4

Հեթանոսությունից քրիստոնեության անցնելու պատմաքաղաքական եւ դավանաբանական պայքարի շրջանն է պատկերված **Խ. Գյուլնազարյանի** «Նռանի» վեպում: Քրիստոնեությունը եկել էր կործանելու հեթանոս հայերի ստեղծած ամբողջ մշակույթը, տաճարները, մոռացության մատնելու հին աստվածներին, վերջ դնելու վայելքի հեթանոսական ձեւերին: Անցումային այս փուլը հեղինակը ներկայացնում է հակոտնյա գաղափարախոսությունների բախումով՝ ստեղծելով Գրիգոր Լուսավորչի, Տրդատ թագավորի եւ հեթանոս քրմերի կերպարները: Նյութը կա, բայց շարադրանքը չափազանց պարզունակ է:

Չորրորդ դարի իրադարձություններն են պատկերված **Ս. Զորյանի** «Վարազդատ» վեպում: Սա հեղինակի եռագրության վերջին գիրքն է եւ շարունակում է նախորդների («Պապ թագավոր», 1944, «Հայոց բերդը», 1959) դիպաշարային գիծը: Վարազդատն անկում ապրող հայոց թագավորության վերջին ներկայացուցիչներից մեկն է: Զորյանի վեպում ողբերգական կերպար է Վարազդատը՝ ե՛ւ իր, ե՛ւ ժողովրդի համար: Նա բյուզանդական Վաղես ինքնակալի դրածոն է, որը համբավ ուներ սոսկ... Հռոմի կրկեսում: Թագավորելով 374-378 թթ.՝ նա գործունեությունն սկսում է հորեղբոր՝ Պապ թագավորի սպանության հանգամանքների քննությամբ եւ անմիջապես տեսանելի դարձնում իր կանխակալ կողմնորոշումը, քանի որ ջանում է սպանության մեղադրանքից պաշտպանել հույներին եւ այդ գործում կասկածել անգամ հայոց սպարապետ Մուշեղ Մամիկոնյանին, որը նվիրված էր թե՛ գահին, թե՛ պետությանը, թե՛ ժողովրդին: Այդ կասկածի զոհն էլ դառնում է Մուշեղը: Մուշեղի եղբորը՝ Մանվելին, հաջողվում է պատերազմում հաղթել դրածո արքային եւ վռնդել երկրից: Մանվելը դառնում է Պապի որդու՝ մանկահասակ Արշակ Երրորդի խնամակալը՝ երազելով կենտրոնաձիգ ու միասնական հայրենիք:

«Վարազդատ» պատմավեպը թեեւ հայոց պատմության գեղարվեստորեն չլուսաբանված դեպքեր է շրջանառության մեջ դնում, բայց եւ այն դժվար է համարել անվանի գրողի գրական հաջողություններից եւ հայ պատմավիպասանության արժեքավոր երկերից մեկը: Թույլ է ոչ միայն պատմական ժամանակաշրջանի բնութագիրը, այլեւ հոգեբանորեն երբեմն անհամոզիչ են անգամ գլխավոր հերոսների արարքները:

Այս շրջանն է արտացոլված նաեւ **Պ. Զեյթունցյանի** «Արշակ Երկրորդ» պատմավեպում, որը, սակայն, ենթարկվել է հեղինակային անհամոզիչ հայեցակարգի՝ կասկածի ենթարկելով իրական հերոսների կերպավորման (Արշակ, Փառանձեմ եւ այլք) պատմական հավաստիությունը:

Պերճ Զեյթունցյան

Նյութի տեսակետից նորություն չբերելով (քանի որ տվյալ ժամանակաշրջանն ու հերոսները պատկերվել էին Ռաֆֆու «Սամվել» եւ Զորյանի «Հայոց բերդը» վեպերում)՝ Զեյթունցյանը ցանկացել է արդիականացնել հերոսների գործունեության հոգեբանական շարժառիթները՝ մի կողմից հեռանալով միջավայրի պատկերման, մյուս կոսմից՝ հերոսների կերպավորման պատմական ճշմարտացիությունից: Դա էլ դարձել է վեպի ձախողման հիմնական պատճառը:

Միջնադարյան Հայաստանի կյանքը յուրովի է արտացոլվել **Վ. Խեչումյանի** «Գիրք լինելության» ուշագրավ վեպում: Հրաժարվելով պետության ղեկավարների կյանքն ու գործունեությունը, ռազմաքաղաքական իրադարձությունները պատկերելու ընդունված սկզբունքից՝ վիպական գործողությունները պալատական միջավայրից նա դուրս բերեց դեպի բուն առօրյա կյանք, ռազմարշավներին փոխարինեցին գրիչների եւ ծաղկողների ճամփորդությունները երկրով մեկ, եւ նրանց հարաբերությունների ու զրույցների միջոցով ներկայացրեց ժողովրդի իրական կյանքն ու կենցաղը, սովորություններն ու բարքերը: Խեչումյանի հերոսը գրիչ Ավետիքն է, պատկերած ժամանակը 12-13-րդ դարերն են, երբ հայերը պայքարում էին թուրք-սելջուկների ներխուժումների դեմ: Ավետիքը որոնում է իր սիրած աղջկան՝ Նանարին, եւ նրան գտնելով թշնամու դեմ հերոսամարտի ելած Մուշ քաղաքում՝ առնում տանում է իր ծննդավայրը՝ Անի:

Վիպասանության մեջ, մի կողմ թողնելով պատմական տարեգրությունների քաղաքական դեպքերը եւ նրբորեն ի մի բերելով ժողովրդի կյանքը կենդանացնող նրբերանգները, նա ստեղծել է ժամանակի մթնոլորտը, ցույց տվել, թե ինչպես են մարդիկ ապրել, սիրել, ստեղծագործել, ծառայել հայրենիքին:

Միջնադարյան Հայաստանը Խեչումյանի արձակի «գլխավոր հերոսն է»: Իր նախասիրությունները ճշտելով դեռեւս «Զվարթնոց» (1945) հավաքածուի պատմվածքներում՝ նա հետագայում իր «գլխավոր հերոսին» մարմնավորեց նաեւ «Գիրք պանդխտության» (1959), «Գիրք գրոց» (1978) ժողովածուներում: Առաջինում զետեղված են պատմվածքներ միջնադարյան մոտիվներով («Աստվածամայրը», «Սրինգի վարպետը», «Երեք հասակ» եւ այլն), իսկ երկրորդում նա խոսում է ձեռագիր գրքերի, կերպարվեստի, մանրանկարչության եւ տոմարի մասին՝ գրողի ոգեկոչումներին զուգակցելով նաեւ գիտնականի «փաստագիտություն»: Խեչումյանի այս նախասիրությունների ձեւավորմանը նպաստել է այն հանգամանքը, որ նա մասնագիտությամբ պատմաբան էր եւ շուրջ 15 տարի աշխատել է Երեւանի Մատենադարանում՝ լինելով ձեռագրատան վարիչը:

Միջնադարյան ժամանակների ոգեկոչումով ուշագրավ պատմվածքների ժողովածու հրատարակեց նաեւ **Ռ. Արամյանը** («Մեռած քաղաքի պարիսպների տակ», 1970):

Շարունակելի

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ԱԹ-ԹԱՄԱՀԻ

Սկիզբը՝ էջ 5

Ինչո՞ւ այդքան վստահ ես, թե մի նեղվածք վայրում թաքնված չեն երկու տասնյակ ծառա՝ քեզ սպանելու»:

Ես պարսկերեն էի խոսում, ուստի խալիֆի ծառաները չէին հասկանում: Աս-Սայմարին նրան պարսկերեն ասաց. «Նա զուտ ճշմարտությունն է ասում»: Էմիրը մեզ պատասխանեց. «Եթե ես անմիջապես ետ դառնամ, նրանք կմտածեն, որ վախենում եմ, եւ ես կզրկվեմ նրանց հարգանքից: Նրանք ինձ վախկոտ կհամարեն: Բայց դուք ինձնից շատ չհեռանաք: Մեզ հետ գլուխ չեն հանի հարյուրավոր այս ջահելները, բացի այդ, նրանց տերը հազիվ թե հանդգնի ինձ հետ այդպիսի անմիտ խաղ խաղալ»: Եվ այնպես արագ առաջ ընթացավ, որ մենք չէինք հասցնում զննել այն, ինչ շրջապատում էր մեզ»:

Շուտով հասանք մի հարկաբաժին, ուր կանացի պղնձե արձան կար, իսկ դրա առջեւ՝ ավելի փոքր արձաններ, որ պատկերում էին նրա ծառաներին: Մենք երբեք այդ արձաններից գեղեցիկ բան չէինք տեսել. հատկապես լավ էր ամենամեծը: Մուազզզ ադ-Դաուլեան հիացած հարցրեց՝ ինչ է դա: Նրան բացատրեցին, որ այդ արձանն անվանել են Շուգալ, եւ որ դա ալ-Մութադիդին բերել են հնդկական մի երկրից, ուր տեղաբնակները երկրպագել են դրան: Երբ Օմանի թագավորը գրավեց ու հպատակացրեց այդ երկիրը, բերեց այս արձանը: Մուազզզ ադ-Դաուլեան ասաց. «Երդվում եմ ալլահով՝ սիրահարվեցի այդ արձանին՝ գեղեցկության պատճառով, ու թեեւ ձեռնպահ եմ ստրկուհի գնելուց, սրան կտայի հարյուր հազար դինար, եթե ստրկուհի լիներ: Մտադիր եմ խալիֆին խնդրել, որ ինձ տա, որպեսզի սա լինի մոտս, եւ որպեսզի ես միշտ կարողանամ նայել նրան»:

Աս-Սայմարին ասաց. «Չանես այդ բանը, թե չէ քեզ մանկամիտ կհամարեն»: Մենք շտապեցինք արագ նայել պալատը եւ դուրս գալ՝ ուրիշ բանի մասին չմտածելով, եւ մեր սրտերը հանգստացան լոկ այն ժամանակ, երբ Մուազզզ ադ-Դաուլեան կրկին միացավ իր զորականներին ու թիկնապահներին: Մտնելով իր նավը՝ նա դարձավ ու աս-Սայմարին ասաց. «Աբո՛ւ Զաֆար, համակվեցի ավելի համակրանքով խալիֆի հանդեպ, քանզի եթե նա իմ դեմ չար միտք էր թաքցրել, հեշտությամբ կարող էր ինձ սպանել այսօր»:

Աս-Սայմարին պատասխանեց. «Դա այդպես է, եւ դու կարող ես շնորհակալ լինել ալլահին»: Իսկ երբ Մուազզզ ադ-Դաուլեան վերադարձավ իր պալատը, հրամայեց տասը հազար դրրհեմ բաժանել Աբու Թալիբի հետնորդներին՝ իբրեւ զոհաբերություն իր փրկության դիմաց: Դրամը բաժանեցին, իսկ դրանք ստացողները բնավ գլխի չընկան, թե ինչի համար էր»:

▼▼▼

Ահա թե ինձ ինչ պատմեց Աբու Մուհամմադը Բաղդադի դատավոր Աբու Եահյի իբն Մուքարրամից լսելով, որն իր հերթին դա լսել էր իր հորից.

«Ինձնից ոչ հեռու,- պատմում էր նա,- ապրում էր Աբու Ուբայդ անունով մի շեյխ՝ կրթված մի մարդ, որ գիտեր շատ պատմություններ: Նա Իսհակ իբն Իբրահիմ ալ-Մուսաբիի սեղանակիցն էր: Սա ինձ պատմեց, որ մի անգամ կեսգիշերին իրեն կանչել են Իսհակի մոտ, որն իրար ետեւից մարդ էր ուղարկում իր մոտ: Նա շատ անհանգստացած էր՝ գիտենալով Իսհակի կատաղի բարքը եւ այն թեթեւությունը, որով նա արյուն էր հեղում: «Ես վախեցա,- պատմում էր նա,- ինչ-որ մի բանով նրա դժգոհությունը չե՞մ շարժել՝ լինելով իր հետ, կամ որեւէ մեկը նրան իմ մասին չի՞ բամբասել, որով կարող էր զայրացնել, եւ որի համար կարող էր որոշել սպանել ինձ:

Տնից ելա՝ սարսափով պատած, եւ գնացի նրա պալատը, ուր ինձ սենյակից սենյակ էին տանում, հասցրին կանանց բաժինը, դրանից իմ հուսահատությունն ավելացավ: Ինձ տարան մի փոքր սենյակ, որի մուտքի մոտ ես լսեցի ծանր հոգոցներ: Իսհակը նստած էր աթոռին, ձեռքին բռնել էր մերկացրած սուրը: Այդ տեսնելով՝ այլայլվեցի, բայց ողջունեցի նրան ու կանգնեցի նրա առջեւ: Նա ասաց. «Նստի՛ր, Աբո՛ւ Ուբայդա»: Այս խոսքերն ինձ հանգստացրին, եւ ես նստեցի: Այնժամ նա ինձ նետեց մի քանի թուղթ, որոնք, ինչպես պարզվեց, քաղաքային պահնորդների ջոկատի ղեկավարների զեկույցներն էին: Նրանք փոխվում էին չորս օրը մեկ, եւ նրանցից յուրաքանչյուրը հաղորդում էր իր օրոք կատարված դեպքերի մասին: Գրությունների մեծ մասում ասվում էր կանանց ձերբակալության մասին: Դրանք վեզիրների, բարձրաստիճան պաշտոնյաների, զորապետների ու էմիրների դուստրեր էին, որոնց գտել էին անպատեհ իրավիճակներում՝ տղամարդկանց հետ: Բոլոր այդ կանայք բանտում էին, եւ բոլորի կապակցությամբ ստացվել էին համապատասխան կարգադրություններ:

Ես ասացի. «Ուսումնասիրել եմ այդ բոլոր հաղորդումները: Ի՞նչ հրաման կտա ինձ էմիրը»: Նա պատասխանեց. «Այս բոլոր կանանց հայրերը գերազանց են ինձնից ե՛ւ անունով, ե՛ւ դրությամբ, ե՛ւ հարստությամբ: Բայց տե՛ս՝ ինչի է հասցրել ճակատագիրը նրանց: Մտածեցի, որ նաեւ իմ դուստրերը կհասնեն այդ աստիճանին, ուստի հավաքեցի բոլոր հինգին, նրանք այստեղ՝ մոտ են, եւ պատրաստվում եմ սպանել բոլորին միասին, որպեսզի խուսափենք անախորժություններից: Սրան դու ի՞նչ կասես»:

Ես պատասխանեցի. «Ո՛վ էմիր, բանտում գտնվող այն աղջիկների հայրերը նրանց չեն հետեւել ինչպես հարկն է: Նրանց կարողություն են թողել, բայց չեն ապահովել ամուսինների պաշտպանությամբ. աղջիկները վերվարած են եղել ու շեղվել են ճանապարհից: Եթե հայրերը նրանց ամուսնացնեին վայելուչ կոչումով տղամարդկանց հետ, այդպիսի բան չէր լինի: Ես քեզ առաջարկում եմ կանչել այսինչ զորապետին,- ասացի անունը,- նա հինգ որդի ունի, եւ բոլորը՝ մեկի նման լավ, գերազանց դաստիարակված: Քո դուստրերից յուրաքանչյուրը նրա որդիներից մեկին տուր եւ այդպիսով կխուսափես խայտառակությունից ու հրո գեհենից»: Նա պատասխանեց. «Դա լավ միտք է, Աբո՛ւ Ուբայդա: Իսկույն մեկին ուղարկիր այդ զորապետի մոտ, եւ թող այդպես լինի»:

Ես ուղարկեցի այդ մարդու ետեւից, եւ նա դեռ լուսաբացից առաջ ներկայացավ իր որդիների հետ, եւ ես նրանց բոլորին ամուսնացրի Իսհակի դուստրերի հետ: Իսհակը յուրաքանչյուր դստերը տվեց հինգ հազար ոսկեդինար եւ շատ այլեւայլ օծանելիքներ, հագուստ, ձիեր, ջորիներ ու ստրուկներ. փեսաներից յուրաքանչյուրն ինձ տվեց ստացածի մի մասը, իսկ Իսհակի հարճերն անմիջապես ինձ նվերներ ուղարկեցին՝ իբրեւ շնորհակալություն, որ փրկեցի իրենց դուստրերի կյանքը: Ամեն ինչ ավարտվեց բարեհաջող, եւ պալատից հեռանալիս ինձ հետ տարա երեք հազար ոսկեդինար, օծանելիքներ ու հագուստներ»:

Ռուսերենից թարգմ.
Արշակ ՄԱԴՈՅԱՆԸ

ՈՎՔԵ՞Ր ԵՆ ՔՐԻՍՏՈՍԻ ՆԱԽԱՆՁԱՀՈՒՅՑ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԸ

Սկիզբը՝ էջ 5

Հավանորեն Ատոմյանց փախուստը քողարկելու համար մյուս զորականների մեջ մոգերի թելադրանքով լուր են տարածել, թե նրանք արգելափակված են բանտում:

Ամենայն հավանականությամբ այս չորս զորականները Սրբոց Ատովմեանց վկայաբանության մեջ հիշատակված չորս ավագ նախարարներն են՝ Ատոմ Գնունի, Վարս սեպուհ ի յՈտան(եայ) տանէ, Ներսէհ յԱրուանթունի տանէ, Վարձաւոր Արծրունի *(Վկայութիւն Սրբոյն Ատոմայ եւ որդւոյ իւրում եւ Վարսայ, եւ Ներսեհի եւ Վարձաւորին -Սոփերք հայկականք, հ. ԺԹ, Վենետիկ, 1854, էջ 81: Մ. Չամչյանը եւս նշում է նույն անունները, միայն Ներսեհին անվանում է Երվանդունի - Մ. Չամչյանց, հ. Բ, էջ 20: «Վկայաբանութիւն Սրբոց Ատոմեանց նահատակացն» - Գիրք որ կոչի Այսմաւուրք, նաւասարդի Թ եւ օգոստոսի ԺԹ)*: Այս ամենի մասին մանրամասն պատմում է ոչ միայն Հայսմավուրքը, այլեւ Մ. Չամչյանն իր «Հայոց պատմության» մեջ *(Մ. Չամչյանց, հ. Բ, էջ 20-21)*: Բացի այդ, մի Գանձարանում, Գրիքոր վարդապետ Արծկեցուն վերագրվող «Սրբոց Ատոմեանց» տաղում փառաբանվում է նաեւ Մանաճիրի Ռշտունու սխրանքը *(Մատենագիրք Հայոց, ԺԳ հատոր՝ Գանձարան, երկու գրքով (կազմեց եւ խմբագրեց Վ. Դեւրիկյանը), գիրք Ա՝ «Ի. Կանոն Սրբոց Ատովմեանց զաւրավարացն», Տաղ Սրբոց Ատոմեանց ի Գրիգոր Վարդապետէ - Անթիլիաս-Լիբանան, 2008, էջ 345)*.

«Իսկ Մանաճիրի Ըռշտունին
եկն ի գաւառն իւր հայրենին,
Ի յոչխարանցն գեաւղն
հասին եւ զկատարումն ի տեղն առին:
Զաւրագլուխքն այն
երկոքին, Ատոմն ընդ Մանաճըրհին,
Աչաւք իւրեանց զՔրիստոս
տեսին, զանձինս իւրեանց ի մահ եդին:
Վարդատեսակ այն պըսակին
զաւրքն իւրեանց փափագեցին,
Որով զարիւնս իւրեանց
հեղին, անանց կենաց ժամանեցին:
Սուրբ Մանաճիրի ընդ
Վարոսին, զաւրքըդ բոլոր ընդ Ատոմին,
Մեզ բարեխաւս ձեր
տաւնողաց, փըրկել ըզմեզ ի փորձանաց»:

Գանձարանի նույն Ի. կանոնում զետեղված է Գրիգոր Խլաթեցու «Գանձ Ատոմեանց» տաղը, որի մեջ հիշատակվում են Ատոմ Գնունին՝ իր Վարոս որդու եւ Մանաճիրի զորավարի հետ *(Մատենագիրք Հայոց, ԺԳ հատոր՝ Գանձարան, գիրք Ա, էջ 341-343)*:

.....

Ատոմըն գովեալ, Մանաճիրի
ընդրեալ, վարս գեղազարդեալ,
Զքեզ Տէր դաւանեալ, ի Քեզ
յուսացեալ, Քեզ երկըրպագեալ,
Բարեխաւսութեամբ Սըրբոցս
ի մարմնի,
Զմերս ընկալցիս պատարագ
բանի...
Գերագով գընդին, գլուխ
ընդըրեալ զաւրին, Ատոմ
Գընունին
Եւ Վարոս որդին, իւր իսկ
սիրելին, Մանաճիր հարին
(տպ. սխալ՝ «Մանաճիր հարին» - ուղղում եմ՝ «Մանաճիրի արին» (իմա՝ Քաջ Մանաճիրիը),
Ի կոչն երթային, Շապուհոյ
Ազկերտին, չար բըռնաւորին,
Հարկ եդեալ չարին, ուրանալ
նոցին, զարքայն երկնային,

.....

Որք ոչ հաւանեալ, եւ ոչ
հնազանդեալ, հարկին զոր եդեալ,
Զարեւն ոչ պաշտեալ,
ըզհուրն անարգեալ,
զՔրիստոս դաւանեալ,
Յազկերտէ խուսեալ, եւ
փախուստ առեալ, եւ ի Հայս դիմեալ,
Հայի ձորն եկեալ, յոչխարացն հասեալ, եւ անդ բանակեալ,

.....

Ընդ քոյդ կըցորդի, մախթանք
ընդձալի, Սուրբ Կարապետի,
Նախնոյն վըկայի, եւ
Լուսաւորչին, մերոյն Գրիգորի,
Այլեւ սուրբ գընդի, եւ
զաւրավարի, Սըրբոյն Ատոմի,
Իսկ եւ Վարոսի, եւ Մանաճիրհի,
եւ իւրեանց բանակի,
Քեզ աղերս լիցի, եւ քոյդ
Միածնի, Կոյսդ երանուհի,
Տալով աշխարհի, պարգեւըս
բարի, հայոց մեր ազգի,
Գանձիս ասողի, սիրով
հայցողի, մասն ի պարգեւի,
Ողորմեաց:

Շատ զարմանալի է, որ հոգեւոր գործերին քաջատեղյակ հայր Ն. Ակինյանին անհայտ է մնացել Ավարայրի պատերազմի նախօրեին նահատակված այս հերոս իշխանը:

գ) Նախադրության բնագրի հնության մասին են վկայում այստեղ երեցներից հետո հիշված նախանձահույզ պաշտոնյաները՝ «նախանձայոյզ պաշտաւնեայք Քրիստոսի» (մյուս խմբագրություններում՝«նախանձաւորք պաշտօնեայք Քրիստոսի» *(Կանոնագիրք Հայոց, հ. Ա, ծանոթ., էջ 629)* եւ «նախանձաւոր պաշտաւնեայք» (Կանոնագիրք Հայոց, հ.Ա, էջ 427), որոնք ոչ այլ ոք են, քան Սահակ Պարթեւ կաթողիկոսի հիմնած սպուդեների դասը, Խորենացու մոտ՝ «սպուդեայք» *(Խոր., Գ, ԽԹ, էջ 320, ԿԷ, էջ 356) (հուն. Σπουδε - նախանձախնդիր բառից)*: Խորենացու վկայությամբ՝ կրոնավոր սպուդեները թվով վաթսունն էին. «...ըստ նմանութեան մայրաքաղաքացն սպուդէից, արք կրօնաւորք, խարազնազգեստք, երկաթապատք, բոկագնացք, որք յար ընդ նմա շրջէին. որովք մշտնջենաւոր պաշտամամբ կատարէր զկանոնն, որպէս զայնս որք յանապատսն էին...» (Խոր., Գ, ԽԹ, էջ 320): Որպես Սահակի հավատարիմ աշակերտներ՝ նրանք ներկա էին նրա հուղարկավորությանը: Սահակ կաթողիկոսի մահից հետո սպուդեները ցրվեցին գավառներում եւ հիմնեցին վանքեր ու եղբայրություններ *(Խոր., Գ, ԿԷ, էջ 356)*: Ինչպես այժմ պարզվում է, սպուդեները՝ Քրիստոսի նախանձահույզ պաշտոնյաները, մասնակից էին նաեւ իրենց սիրելի կաթողիկոսի մահվան յոթերորդ տարելիցին նվիրված Շահապիվանի ժողովին *(Խոր.,Գ, ԿԷ, էջ 356)*: Այս թանկագին վկայությունը, որ վրիպել է Ն. Ակինյանի եւ այլոց ուշադրությունից, չափազանց բարձրացնում է Մաշտոցի Մատենադարանի թիվ 659 ձեռագրում տեղ գտած Շահապիվանի ժողովի Նախադրության արժեքը՝ որպես հնագույն եկեղեցական վավերագրի:

Ալբերտ ՄՈՒՇԵՂՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր

Ս. ԵՓՐԵՄ ԱՍՈՐԻ

ՄԱՐԴՈՒ ԱԶԱՏ ԿԱՄՔԻ ՄԱՍԻՆ

Սկիզբը՝ թիվ 16

Մարդն ինքն իրեն պարտավոր է դարձնում այն բանին, ինչ ցանկանում է ինքն իրեն: Եթե ցանկանում է, որ Աստված ողորմած գտնվի իր հանդեպ, ապա նա չի կարող դաժան լինել իր մերձավորի նկատմամբ: Ընտրության համար առաջադրված են տարբեր վիճակներ: Եթե մեկը դիմում է մեղքը Թողնողին, ապա դրանով մեղքից ազատում է նրան, ով մեղավոր է իր առջեւ, իսկ եթե դիմում է վրիժառուին, ապա արդեն զրկվում է թողություն Շնորհողից: Ամեն տեսակետից նրան մոտիկ եղողը սեռակից է նրան:

Ուր ողորմությունն է, այնտեղ մարդու պարտապաններն են, ուր ճշմարտությունն է, այնտեղ մարդու մեղքերն են: Եթե ցանկանում է թախանձել իր մեղքերի համար, ապա աղոթում է նաեւ վասն իր պարտապանների: Եթե ցանկանում է ողորմել, ներում է իր պարտապաններին, իսկ եթե ձեռնամուխ է լինում ճշմարտությանը, հիշում է իր մեղքերը:

Գ.

Աստվա՛ծ, արժանի դարձրու ինձ փառաբանել Քեզ, եթե թույլ տան ինձ մեղքերն իմ: Սակայն, Տե՛ր իմ, Քեզ հայտնի է, որ համառությունը մեզ հաղթանակ է շնորհում: Եռակի հարվածից բացվում է դուռը, եւ մեր աննահանջ համառությամբ հաղթվողը հաղթում է: Ով հանդգնությամբ է խնդրում, նա ստանում է հանուն իր աղքատության եւ դառնում է ուժեղ՝ իր տկարությամբ:

Քո դուռը կողպված չէ: Այն կողպված չէ նաեւ ինձ համար, իսկ եթե կողպված էլ է,

ապա, Տե՛ր իմ, այդ անում ես Քո գերիմաստուն հեռատեսությամբ եւ խորագիտորեն կարգավորում ես հանուն մեզ: Թե՛ մեկ եւ թե՛ մյուս դեպքում զարմանում եմ Քո իմաստության վրա եւ այն բանի վրա, որ Քո դուռը, Տե՛ր իմ, այնժամ ուժով կբացվի, երբ կողպված լինի, եւ մեր ազատ կամքն այն բանալին է, որ առաջնորդում է դեպ քո գանձարանը:

Եվ քանի որ դա մեզ համար միակ դուռն է, ապա թույլ տուր բացել այն եւ մտնել ներս, քանի դեռ այն չի փակվել մեր առջեւ:

Դեպ Ճշմարտության անխորտակելի դարպասներ տանող առանձնահատուկ եւ շատերի համար անցանելի ողորմության մի բավիղ կա: Թե՛ ողորմությունը եւ թե՛ ճշմարտությունը հաճախ մեկմեկու օգնության են հասնում:

Աստծո ողորմությունը կարող է եւ բռնի կերպով մարդուն դարձնել արդար, բայց այն նրանում չի ոչնչացնում բանականության ուժը, թեպետեւ գիտե, որ մարդուն կարող է դարձնել արդար: Եվ մեզ համար նվազ տհաճ չէ նա, ով լույսի առջեւ փակում է իր աչքերը: Երկուսից մեկը պիտի ենթադրի՝ ով կցանկանար առաջնորդել իր սեփական աչքերը փակողին. կա՛մ այն, որ նա մանկամիտ դատողություն ունի, կա՛մ այն, որ դա անագորույն եւ դառն ծաղր է, եւ կամենում է տեսնողներին հայտարարել իր արհամարհանքն աչքերի նկատմամբ: Ամոթ կլիներ նրան, ով հանձն կառներ առաջնորդել այդ մարդուն. նա ինչո՞ւ չի նկատում, որ իրեն առաջնորդել թույլ տվողն աչքեր ունի: Նույն կերպ եւ Աստված, Ով առաջնորդում է առողջ տեսողություն ունեցող մարդուն, թույլ չի տա, որ նա անարգի Իրեն եւ արհամարհի տեսողությունը, որ Նա Ինքն է տվել մեզ: Տե՛ս, որ դա նույնքան անխոհեմ կլինի, եթե մարդ, ունենալով առողջ ձեռքեր, չցանկանա օգտագործել դրանք: Անխոհեմ է եւ այն եղբայրը, ով նրան ձեռք կմեկնի, որ նա նրանով ուտի կամ խմի: Առավել եւս, մի՞թե Աստված բռնություն կգործադրի մեր հանդեպ, երբ Նա Ինքն է ազատ կամք տվել մարդուն: Ով ցանկանում է, որ իրեն բռնությամբ առաջնորդեն, նա արժանի չէ ողորմության, ու եթե ճշմարտությունը պատժում է նրան, ապա նա ինքն իր արատով է ստիպում նրան այդ անել: Ահավասիկ, ազատ կամքը նման է ձեռքի, որ կարող է երկարել ամեն տեսակի պտղի, եւ ինչպես նախկինում սեփական ընտրությամբ, կարող էր քաղել եւ իրեն վերցնել մահվան պտուղը, ճիշտ այդպես էլ կարող է քաղել նաեւ կյանքի պտուղը:

Եթե մենք բնությամբ տկար ենք, ապա «մեղավոր» է Արարիչը, իսկ եթե մեր ազատ կամքը չար է, ապա ամբողջ մեղքը մեր մեջ է: Եթե մեզանում չկա ազատ կամք, ապա ինչո՞ւ մեր կամքը ենթարկենք պատասխանատվության: Եթե մեր կամքն ազատ չէ, ապա հանիրավի է Աստված դատում նրան, իսկ եթե այն ազատ է, ապա իրավամբ է նրանից պահանջում:

Հաշվետվության պահանջը սերտորեն կապված է ազատությանը: Օրենքն այն կապի մեջ է, որ առկա է թե՛ մեկի եւ թե՛ մյուսի մոտ: Քանզի ազատ կամքն այն ժամանակ է ենթարկվում պատասխանատվության, երբ նա խախտում է Դատավորի մատնանշած սահմանները: Արարիչը, որ ճշմարտացի է, ի՞նչ օգուտ ունի մեզ խաբելուց: Եթե Նա մեզ ազատություն չի տվել, ապա չի տվել եւ ոչ մի օրենք: Եթե արդար է՝ ինչ լսում ենք ազատության մասին, ապա հնարավոր է, որ թե՛ մեզ հարցնեն, թե՛ մենք հարցնենք. արդյոք ստո՞ւյգ է, որ Արարիչը մեզ ազատություն է տվել, թե՞ ոչ: Եթե մեզ ազատություն չի տվել, ապա պատշաճ է մեզ մտնել քննության մեջ. իսկ ինչո՞ւ չտվեց այն: Բայց եթե չունենք ազատ կամք, ապա ինչպե՞ս Նա թույլ տվեց մեզ խոսել այդ մասին: Հարցերն ու հետախուզումները ծնվում են ազատ կամքից: Հարցը եւ հետախուզումը քույրեր են, եւ երկուսն ազատ կամքի դուստրերն են: Արդեն կանխավ կարող ենք հավաստիանալ, որ հարցը բխում է սեփական կամքից: Նույնիսկ հանիրավի է հարցնելը՝ ստո՞ւյգ է արդյոք, թե ազատ կամք կա կամ չկա:

Շարունակությունը՝ էջ 8

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սբ Էջմիածնի հրատարակչական բաժինը 2013 թ. լույս է ընծայել 19-րդ դարի 2-րդ կեսի ռուս կրոնական փիլիսոփա **Վլադիմիր Սոլովյովի «Երեք Զրույց»** գրքի հայերեն թարգմանությունը, որը 2004-2008 թթ. ստանձնել էր Վազգենյան հոգեւոր դպրանոցի տեսչությունը:

Այս գրքի հրատարակության նպատակը հայ կրոնափիլիսոփայական գիտելիքի հարստացմանը նպաստելն ու ընթերցողին հայոց լեզվով նոր ու տարաբնույթ մասնագիտական գիտելիքի տրամադրումն է:

Երկը, որը նախատեսված է ընթերցողների լայն շրջանակների համար, ձգտում է աստվածարդարացման (թեոդիցիայի) ճանապարհով բացատրել անանցական ճշմարտությունները՝ այլափոխված ու աղճատված աշխարհայինի անցականի մեջ, որտեղ խառնված են չարն ու բարին, լույսն ու խավարը, որտեղ դժվար է ճշմարտությունը զատորոշել կեղծիքից: Աստվածարդարացման սոլովյովյան տեսությունը ջանում է ներկա աշխարհի մեջ աստվածայինը տարանջատել աշխարհային կեղծիքով քողարկված աստվածադատ իրականությունից: Աշխատությունը տպագրվել է Սանկտ Պետերբուրգի հայ համայնքի նախագահ Կարեն Մկրտչյանի մեկենասությամբ:

Հարավսլավացի ուղղափառ աստվածաբան **Վեզելին Քեսիչի «Քրիստոսի ավետարանական կերպարը»** աշխատության հայերեն թարգմանությունը կատարել է Տ. Վահրամ քահանա Մելիքյանը:



Գիրքը մի նոր ներդրում է հայ ընթերցող հասարակությանը ծանոթացնելու ժամանակակից աստվածաբանական-մեկնողական մտքի հարուստ գանձարանին: Ընթերցողն աշխատության մեջ կարող է գտնել ավետարանական շատ հարցերի պատասխաններ, նորովի կսկսի ընկալել ու ընթերցել Ավետարանը:

Ընդհանրական Եկեղեցու Դ դարի նշանավոր հայրերից **Սուրբ Եպիփան Կիպրացու ճառերի** գրաբար բնագրերը՝ աշխատասիրությամբ Հակոբ Քյոսեյանի:

Գրքում ամփոփված 52 ճառերը հարուստ նյութ են բովանդակում սուրբգրային պարականոնների, եկեղեցական ավանդազրույցների հետազոտման համար: Հայրաբանական ակներեւ հետաքրքրությամբ աչքի են ընկնում մասնավորապես Ծննդոց գրքի բացատրությունը պարունակող ճառերը, որոնց հունարեն բնագրերն այսօր անհայտ են:

Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք **Հակոբ Նալյանի «Հոգեւոր զրույցներ»** գիրքը՝ աշխատասիրությամբ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի սաների:

«Հոգեւոր զրույցներ» ընդհանուր խորագրի ներքո ամփոփված է Հակոբ Պատրիարքի «Գանձարան ծանուցմանց» քարոզգրքից քաղված եւ աշխարհաբարի վերածված քսան քարոզ, որոնք ընթերցողին պատասխաններ են տալիս ժամանակակից տարբեր մարտահրավերների վերաբերյալ:

Գեւորգյան հոգեւոր ճեմարանի նախաձեռնած «Սերմնացան» մատենաշարի այս առաջին հրատարակությունը նվիրված է Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հիմնադիր Ամենայն Հայոց Գեւորգ Դ Մեծագործ Հայրապետի ծննդյան 200-ամյակին:

Լույս են տեսել նաեւ **Անահիտ Պարսամյանի «Աշոտ երկաթի խաչը»** վիպակը, **Վարագ Ներսիսյանի «Հայ հին գրականություն»** ուսումնական ձեռնարկը, **Երվանդ վարդապետ Տեր-Մինասյանցի «Ընդհանուր Եկեղեցու պատմություն»** դասագրքի Ա հատորը եւ **Վալերի Գ. Թունյանի «Խրիմյան Հայրիկի հայրապետությունը 1893-1907»** ռուսերեն մենագրությունը:



Անահիտ Պարսամյանի «Աշոտ Երկաթի խաչը» վիպակում ներկայացված են Աշոտ Երկաթի կյանքը, հանուն հայրենիքի նրա մղած անձնվեր պայքարը, ժամանակի բախտորոշ պահերին Եկեղեցու եւ պետության միասնականությունը:

Վարագ Ներսիսյանի «Հայ հին գրականություն» ուսումնական ձեռնարկը վերջին տարիների հայագիտության հանգրվանային նվաճումներից մեկն է: Աշխատությունն իր անուրանալի լուման կարող է ներդնել ոչ միայն Հանրապետության բուհերի համապատասխան բաժինների ուսանողների մասնագիտական պատրաստման գործում, այլեւ կարող է օգտակար լինել հայագիտությամբ հետաքրքրվող լայն շրջանակների համար:

Երվանդ վրդ. Տեր-Մինասյանցի «Ընդհանուր Եկեղեցու պատմություն» դասագրքի Ա հատորում փաստական հարուստ նյութի համակարգված վերլուծությամբ լուսաբանվում են Եկեղեցու հիմնարկման, քրիստոնեության առաջին դարերի պատմական ընթացքի, դոգմատիկ զարգացումների, ինչպես նաեւ Եկեղեցու դավանաբանական առաջին պառակտման համալիր հիմնահարցերը:



Վալերի Գ. Թունյանի «Խրիմյան Հայրիկի հայրապետությունը 1893-1907 թթ.» ռուսերեն մենագրությունն ամբողջական կերպով հետազոտում է Խրիմյան Ա Վանեցի Հայրապետի 1893-1907 թթ. գործունեությունը: Արխիվային, պատմական ու աղբյուրագիտական լուրջ նշանակություն ունեցող այս գիրքը նախատեսված է բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրված են 19-րդ դարի վերջի եւ 20-րդ դարի սկզբի հայ ժողովրդի ու Եկեղեցու պատմությամբ:

Վերոնշյալ չորս աշխատությունները հրապարակվել են Մայր Աթոռի բարերար Գաբրիել Չեմպերճյանի մեկենասությամբ:

Ժնեւում բացվեց հայոց ցեղասպանությանը նվիրված ցուցահանդես

Սեպտեմբերի 2-ին Ժնեւի էկումենիկ կենտրոնում բացվեց «Զի Ես կենդանի եմ, եւ դուք կենդանի լինելոց էք» (Ղուկ. ԺԴ 19) խորագրով ցուցահանդես՝ նվիրված XX դարի առաջին ցեղասպանությանը՝ հայոց Մեծ եղեռնին: Ցուցահանդեսը կազմակերպել էին Մայր Աթոռ Սբ Էջմիածնի արխիվը եւ հայաստանյան միջեկեղեցական բարեգործական «Կլոր սեղան» հիմնադրամը՝ աջակցությամբ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի:

Թեմատիկ ցուցավահանակների եւ գրքույկի միջոցով այցելուներին ներկայացվեցին պատմական ամփոփ տեղեկություններ Հայաստանի ու հայ ժողովրդի, հանուն հայրենիքի եւ հավատքի՝ հայոց դարավոր մաքառումների մասին, հայոց ցեղասպանության վերաբերյալ արխիվային վավերագրեր եւ լուսանկարներ, համաշխարհային մամուլի էջերում տպագրված հոդվածներ, եղեռն վերապրած հայորդիների վկայություններ, Քրիստոնեական Եկեղեցիների պետերի գրություններ, հայոց ցեղասպանությունը ճանաչած եւ դատապարտած տարբեր պետությունների եւ միջազգային կազմակերպությունների հայտարարություններ:

Ցուցահանդեսի նյութերում տեղ են գտել նաեւ առաջին անգամ հրապարակվող արխիվային նյութեր, ինչպես օրինակ՝ Կ. Պոլսի Հայոց Պատրիարքի նամակները:

Որպես խոսնակ՝ ցուցահանդեսի բացմանը հրավիրված էին Ֆրանսիայի հայոց թեմի՝ Մարսելի եւ Հարավային շրջանի առաջնորդական փոխանորդ Մեսրոպ վրդ. Պարսամյանը եւ ԵՀԽ գլխավոր քարտուղարի տեղակալ դոկտոր Իսաբել Ապավո Փիրին:

Հայոց ցեղասպանությանը նվիրված նյութերի ցուցադրությունը կտեւի մինչեւ սեպտեմբերի վերջը եւ հետագայում կկազմակերպվի նաեւ այլ երկրներում:

Լրատվական նյութերը՝
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ

ՄԱՐԴՈՒ ԿՅԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Սկիզբը՝ էջ 7

Որքան փութով է քո մեջ խնդիր ծագում ազատության մասին, ըստ այդմ հարցնելու է, թե ո՞վ է առաջադրում քեզ այդ հարցը. արդյո՞ք քո կամքը, թե՞ այլ ուժ: Այդ հարցն արդյո՞ք ուրիշից է տրվում, թե՞ քո կամքից է ծնվում: Դու պետք է իմանաս այդ, քանզի դա կատարվում է քո մեջ: Եթե դու չգիտես ո՛չ մեկը եւ ո՛չ մյուսը, ապա չգիտես եւ այն, ինչ գոյություն ունի: Զրկված լինելով ամեն տեսակի գիտելիքից՝ դու խոսում ես տարօրինակ բաներ. իբր թե մեր մեջ մուտք է գործում օտար մեկի խորհուրդը, եւ այդ օտար մեկն այդ խորհրդի միջոցով հարց է առաջադրում: Մե՞կը, թե՞ շատերն են հարցնում, միեւնույն է, քանզի մեր կատարած եզրակացությունը միայն մեկն է: Քո մասին հնչած եզրակացությունը տարածվում է նաեւ բոլորի վրա:

Երբ մեկը կասկածում է կամքի ազատությանը եւ հարցնում է՝ ստո՞ւյգ է, որ այն կա, դրանով նա, ինչ ասել էր քո մասին, առարկում է ինքն իրեն:

Բուն իսկ հարցից տեսնում ենք, որ իր բնույթով այն ինքն իր տերն է, ապա մյուսը, որի մասին է տարվում վեճը, ամփոփված է հենց նրա մեջ: Այնտեղ է քողարկված պատասխանը: Եթե հարցնելը քո հնարավորության սահմանի մեջ է, ապա այդ նշանակում է, թե հարցնում ես ո՛չ ըստ անհրաժեշտության: Եթե դու զրկված լինեիր հարց տալու իրավունքից, ապա զրկված կլինեիր նաեւ ազատությունից:

Անհրաժեշտությամբ կաշկանդված բնությունը չի կարող հարցնել: Հարց տալն ազատ կամքի գործն է: Միայն անհրաժեշտությամբ չկաշկանդված բնությունը կարող է հարցնել, քանզի նրա կամքն ազատ է: Թե՛ մեկը եւ թե՛ մյուսը քեզ պարզիպարզո ցույց կտան երկու նմանություն, եւ դյուրինի միջոցով կհասկանաս դժվարինը: Համրը չի կարող հարցնել, որովհետեւ նրա լեզուն կաշկանդված է: Ով ունի խոսելու շնորհ, նա կարող է հարցնել, քանզի նրա լեզուն կապված չէ: Համրի մեջ, որի լեզուն կաշկանդված է, տես եւ իմացիր, թե ինչ է անհրաժեշտությամբ կաշկանդված բնությունը: Խոսելու շնորհ ունեցողի մեջ, որի շուրթերը կապված չեն, տես եւ իմացիր, թե ինչ է ազատությունը:

Ինչպես խոսքը շուրթերի վրա ոչնչով կաշկանդված չէ, այդպես ազատ կամքն իր վրա չունի ոչ մի կապանք: Թե ինչպիսին է համրի կաշկանդված լեզուն, այդպիսին է եւ անհրաժեշտությամբ կաշկանդված բնությունը: Առաջինը խոսք չունի շուրթերի վրա, երկրորդը չունի ազատ կամք:

Այսպես, ասված խոսքից իմացիր քո արժանապատվությունը: Ճանաչիր ազատությունը քո էության մեջ: Հետազոտիր քո մեջ ոգուդ զորությունը: Իմացիր, արդյոք դու ունե՞ս այն, թե՞ ոչ: Քեզնով եւ քո մեջ կարող ես ճանաչել ազատությունը:

Թարգմանությունը՝
Հակոբ ՔՅՈՍԵՅԱՆԻ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Աստղիկ Ստամբոլցյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սբ Էջմիածին
Հեռախոս՝ 517197
Էլ.փոստ՝ qh@etchmiadzin.am
web կայք՝
kh-tert.livejournal.com
krishayas.wordpress.com
Ստորագրված է տպագրության 17.9.2013 թ.
Տպաքանակը՝ 2100
Գինը՝ 50 դրամ